



# Փ Ա Ր Ո Ս

## Paros

ISSUE 49 – AUGUST / ԹԻԻ 49 – ՕԳՈՍՏՈՍ 2021

NEWSLETTER OF THE DIOCESE OF THE ARMENIAN CHURCH OF AUSTRALIA & NEW ZEALAND


### ԹԵՄԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ



**Շբ., 7 Օգոստոս** – Առաջնորդ Սրբազան հայրը, Բարձր. Տեր Հայկազուն Արքեպիսկոպոս Նաճարեան նախագահեց Հայ Համայնքի Բարեկեցութեան Կեդրոնի (ՀՀԿ) խնամակալ յանձնախումբի առցանց ժողովին, որուն օրակարգն էր քննարկել յառաջիկայի Ռազմավարական Ծրագիրը (Strategic Plan): Յանձնախումբի նորընտրեալ ատենապետուհի Տիկին Հերմինէ Փարթամեան, որպէս արհեստավարժ եւ երկար տարիներու պետական վարիչ պաշտօնեայ, յանձնախումբի անդամներուն հետ միասին աչքէ անցուց ՀՀԿ-ի ռազմավարութիւնը եւ կատարեց շինիչ ու գործնական յանձնարարութիւններ: Յանձնախումբը կատարեց որոշ յստակացումներ պարզացնելու համար ՀՀԿ-ի հետագայ աշխատանքները, ի լաւագոյն ծառայութիւն մեր մեծահասակ հայրիկներուն ու մայրիկներուն:

**Բշ., 9 Օգոստոս** – Սրբազան Հայրը հանդիպում մը ունեցաւ Իրաւաբան Պրն Էմանուէլ Գրգեաշարեանի հետ քննարկելու համար անոր պատրաստած հարցախոյզին արդիւնքները, որոնք ներկայացուցան Օգոստոս 30-ին գումարելի համայնքային մարմիններու ներկայացուցիչներու ժողովին:

**Ուրբ., 13 Օգոստոս** – Առաջնորդ Սրբազան հայրը, Բարձր. Տեր Հայկազուն Արքեպիսկոպոս Նաճարեան, Ֆէյսպուքեան շաբաթական իր առաջին պատգամը տուաւ յորդորելով քաջ եւ համբերատար ըլլալ համավարակի այս դժնդակ օրերուն: Սրբազան հայրը շատ գեղեցիկ եւ գործնական պատգամ տուաւ Աւստրալահայոց մասնաւորապէս եւ համատարած ունկնդրող հայութեան՝ ընդհանրապէս: Սրբազանին կողմէ առցանց բացատրական եւ խրախուսող ելոյթներու այս դրութեան հաստատումը կարեւոր ձեռքբերում է: Սրբազան հայրը գործնական իմաստութիւն էր որ փորձեց սեփականութիւն դարձնել համավարակի այս ընկճող օրերուն: Կը քաջալերենք սեղմել վարի յղումը (Լինք) եւ դիտել/ունկնդրել Սրբազան հօր գործնական եւ ուղեցոյց հանդիսացող պատգամը:



[<https://www.facebook.com/ArmenianApostolicChurchofHolyResurrection/videos/377144190450377/> եւ կամ Սուրբ Յարութիւն Եկեղեցոյ YouTube-ով, եկեղեցոյ կայքէջին միջոցաւ՝ [www.armenianchurchsydney.org.au](http://www.armenianchurchsydney.org.au) News & Events – Youtube Sermons & Services]

**Ուրբ., 13 Օգոստոս** - Սրբազան Հայրը մասնակցեցաւ ԱՄԷՔ-ի հերթական առցանց ժողովին: Մերձաւոր Արեւելեան երկիրներու եկեղեցապետերը, Մարոնի Առաջնորդ Անթուան Շարպէլ Թարապալ Եպիսկոպոսի եւ ԱՄԷՔ-ի նախագահ եւ Մէլքայթ եկեղեցոյ Առաջնորդ Բոպըրթ Բապպաթ Եպիսկոպոսի բացակայութեանց (Լիբանանի մէջ նշեալ եկեղեցիներու Գերագոյն Սինոտի մասնակցութիւն) ինչպէս նաեւ պսակաձեւ ժառի սահմանափակում-



ներուն պատճառով, ամիսներէ ի վեր չէին կարողացած ժողով գումարել: Ժողովը պարտականութիւն տուաւ Հայկազուն Սրբազանին նամակ մը խմբագրել հասցեագրուած ԱՄԷՔ-ի Քրիստոնէայ համայնքներուն, խորհուրդ տալու համար միասնական ճիգով դիմագրաւելու համավարակի ստեղծած կացութիւնը եւ պատուաստուիլ, առաջքը առնելու համար առողջութեանց վատթարացմանը թէ՛ մեր անմիջական շրջապատին ու սիրելիներուն եւ թէ՛ Աւստրալիոյ, մանաւանդ՝ Նիւ Սաութ Ուելզի մեծ ընտանիքի զաւակներուն:

**Կիր., 15 Օգոստոս – Ս. Աստուածածնի Վերափոխման Տօնի Պատարագ**

Սուրբ Աստուածածնայ Վերափոխման տօնին առթիւ, տարիներու աւանդութիւն դարձած էր եպիսկոպոսական պատարագ մատուցել Մելպուրնի Սուրբ Աստուածածին եկեղեցոյ մէջ: Երկու տարիէ ի վեր, պսակաձեւ Ժահրի պարտադրած սահմանափակումներուն հետեւանքով, Սրբազան հայրը Մելպուրն չկարողացաւ ճամբորդել: Ախտի դրած պայմանները այնքան դաժան են որ նոյնիսկ կարելի չէ Սուրբ Յարութիւն եկեղեցիէն Սուրբ Երրորդութիւն փոխադրուիլ պատարագելու համար, բան մը որ ամէն Կիրակի Սրբազան Հայրն ու Քահանայ հայրերը նախքան Ժահր հերթականութեամբ կը կատարէին: Հետեւաբար, ներկայութեամբ քահանայ հայրերուն եւ մի քանի սարկուազներու Սրբազան հայրը եպիսկոպոսական պատարագ մատուցեց Սուրբ Յարութիւն եկեղեցոյ մէջ, որ առցանց հեռասփռուեցաւ: Սրբազան հայրը արտասանեց յաւուր պատշաճի քարոզ, պատմականը կատարեց Սուրբ Աստուածածնի վերափոխման ապա աղերսեց անոր միջամտութիւնը որ մարդկութիւնը փրկէ Ժահրի սպառնալիքէն: Սրբազանը խնդրեց բոլորէն որ պատուաստուին, ըստ պետական ցուցմունք-ներուն: Աշխարհով մէկ, ամէն օր բօթը կը ստանանք մահացող հայերու, ընտանիքներ կ'անդամահատուին: Ուստի Սրբազանը կրկնեց իր յորդորն ու աղերսը, որ դէմ դնելու համար համավարակին՝ հարկ է պատուաստուիլ: Սրբազան հայրը յորդորեց որ ամուր կառչած մնանք մեր հաւատքին, յոյսին եւ մեր աղօթքներուն, որոնք ապաւին կը հանդիսանան մեզի մեր կեանքի բոլոր դժուարութիւնները դիմակայելու համար եւ մեր հայեացքը ուղղենք Աստուծոյ, որ փրկէ աշխարհը այս մահացու վարակէն:



Սրբազանը նաեւ շեշտեց այն իրողութիւնը որ եկեղեցին ամիսներէ ի վեր պարապ է Կիրակի օրերը, սակայն հաստատեց «մենք ձեզի համար եւ ձեր տեղ կ'աղօթենք ու պիտի աղօթենք, որպէսզի, այս նեղ օրերուն, դուք աւելի զօրանաք ձեր հաւատքին մէջ»:

Այս առիթով Փարոսի խմբագրութիւնը կը շնորհաւորէ իր բոլոր ընթերցողները, որոնք կը կրեն Աստուածամօր եւ անոր վերաբերող անուններ եւ կը մաղթէ առողջութիւն եւ համբերութիւն՝ Աստուածամօր օրինակով, համավարակի այս դժուար օրերուն: Ըստ Հայ Առաքելական եկեղեցոյ

Աստուածածնի Վերափոխման տօնին, տօնելի են, *Մարիամ, Մարօ, Մարի, Մարիան, Մարիանուշ, Տիրուհի, Իսկուհի, Սրբուհի, Մաքրուհի, Թագուհի, Լուսիկ, Լուսածին, Լուսաբեր, Լուսամայր, Արփենիկ, Երանիկ, Երանուհի, Արեգ, Արեւիկ, Լուսինթագ, Աղաւնի, Մարգարիտ, Նազիկ, Նազենի, Բերկրուհի, Պերճուհի, Անթառամ Արուսեակ, Կուսիսէ, Վերգիսէ, Վերգիս, Արշալոյս, Գեղանոյշ, Գեղուհի, Գեղանիկ, Վերժին, Երջանիկ* անունները:



**Բ2., 16 Օգոստոս** – Առաջարկով եւ կազմակերպութեամբ Արժ. Տէր Աւետիս Քահանայ Համբարձումեանի, Տիկին Զեփիւռ եւ Օրիորդ Արգինա Մուրատեաններու (նկարահանում, հեռասփռում ելն), Սրբազան Հայրը տուաւ ֆէյսպուքեան իր երկրորդ երկլեզու պատգամը (Հայերէն եւ Անգլերէն) Հաւատքի մասին: Սրբազանը բազում օրինակներով հասկնալի դարձուց ակնդիրներուն թէ ինչպիսի հրաշագործ զօրութիւն ունէր Հաւատքը մանաւանդ թէ ան որքան անհրաժեշտ էր համավարակի այս օրերուն, մեզ զօրացնելու եւ յաղթական դուրս բերելու համար այսօրուան յուսահատեցնող վիճակէն:

Քսան վայրկեանուան այս պատգամին Լինքը կը հրապարակենք ստորեւ Փարոսի ընթերցողներուն համար: <https://podcasts.apple.com/.../discussions.../id1580697784>



**Կիր., 22 Օգոստոս** – Ընդառաջելով National Council of Churches եւ NSW Ecumenical Councilի կոչ-յայտարարութեան, որով ամսուն 22-ը կը յայտարարուէր «Աղօթքի Օր», յընթացս Պատարագին, Տէր Ողորմեա՛-էն առաջ, Սրբազան Հայրը յայտարարեց այդ մասին: Ան երկու լեզուներով բացատրութիւն տուաւ եւ իւրաքանչիւր ակնդիր հրաւիրեց որպէս Քրիստոնէայ աղօթելու որ Աստուած ողորմի մեզի մեր մեղքերուն համար, միխթարէ բոլոր անոնք որոնք ժահրին պատճառով սիրելիներ կորսնցուցին, բժշկէ հիւանդանոցներու եւ առանձնութեան մէջ չարչարուողները: Ան խնդրեց աղօթք բարձրացնել բոլոր սգաւորներուն, վիրաւորներուն, հեղեղներու, երկրաշարժերու, հրդեհներու պատճառաւ իրենց տունն ու տեղը կորսնցնողներուն եւ գաղթականներուն համար: Աղօթել նաեւ պատերազմներու դաղրեցման բոլոր այն տեղերը ուր մարդիկ իրար կը սպաննեն: Սրբազանը իր խօսքը եզրափակեց՝ «Կը խնդրենք քեզմէ Տէր ողորմեա՛, Տէր ողորմեա՛, Տէր ողորմեա՛»:

նէրուն, հեղեղներու, երկրաշարժերու, հրդեհներու պատճառաւ իրենց տունն ու տեղը կորսնցնողներուն եւ գաղթականներուն համար: Աղօթել նաեւ պատերազմներու դաղրեցման բոլոր այն տեղերը ուր մարդիկ իրար կը սպաննեն: Սրբազանը իր խօսքը եզրափակեց՝ «Կը խնդրենք քեզմէ Տէր ողորմեա՛, Տէր ողորմեա՛, Տէր ողորմեա՛»:

**Բ2., 23 Օգոստոս** – Սրբազան Հայրը նախագահեց Թեմական Խորհուրդի առցանց լիակատար հերթական ժողովին: Ժողովը ունէր ճոխ օրակարգ:

**Գ2., 24 Օգոստոս** – Սրբազան հայրը նախագահեց Կալուածոց Յանձնախումբի վարչութեան առցանց հերթական ժողովին:

**Դ2., 25 Օգոստոս** – Առաջնորդարանի կազմակերպած առցանց լսարանի դասախօսութիւնը տեղի ունեցաւ մասնակցութեամբ 40 ակնդիրներու: Նիւթ՝ Հայ եկեղեցին Հայ պետականութեան կողքին – Բ. Մաս - մինչեւ 900 թուական: Զեկուցաբեր՝ թեմիս Առաջնորդ Բարձրաշնորհ Տէր Հայկազուն Արքեպիսկոպոս Նաճարեան: Երրորդ մասը պիտի ներկայացուի Չորեքշաբթի Մեպտեմբեր 29ին: Սրբազան Հայրը բազում օրինակներով վեր առաւ այն դժուար դերը որ Հայաստանեայց Առաքելական Եկեղեցին ստանձնեց Բիւզանդական, Պարսկական եւ Արաբական իշխանութեանց ներքեւ գտնուող Հայաստանի եւ Հայութեան ի նպաստ: Սրբազանը պատշաճօրէն բացատրեց թէ ինչպիսի բացասական դեր խաղցած է Քաղկեդոնականութիւնը, որը օգտագործուած է Բիւզանդիոնի կայսրերուն կողմէ որպէս քաղաքական գործիք՝ իր տիրապետութեան տակ գտնուող հպատակ Քրիստոնէայ ազգերը ձուլելու իր մէջ: Սրբազան

Հայրը մօտիկ անցեալէն օրինակ տուաւ թէ ինչպէս նոյն բանը ուզած են իրականացնել Սովետական Միութեան համայնավար ղեկավարները, ճնշում բանեցնելով Վազգէն Վեհափառին վրայ, որ սակայն իր իմաստուն եւ ճկուն քաղաքականութեամբ կարողացած է կասեցնել այդ:

Ձեռնարկին հանդիսավարութիւնը կատարեց Արժ Տէր Աւետիս Քահանայ Համբարձումեան, որ ողջունել է տք Սրբազան Հայրն ու մասնակիցները, յայտարարեց որ Լսարանական այս դրութիւնը պիտի շարունակուի ամէն ամսուան վերջին Չորեքշաբթին, իսկ դասախօսները պիտի ըլլան Աւստրալիայէն եւ արտասահմանէն: Դասախօսութեան աւարտին առիթ տրուեցաւ հարցումներու, որոնց Սրբազան Հայրը տուաւ սպառնիչ բացատրութիւն:

Փարոսի խմբագրութիւնը իր շնորհակալութիւնը կը յայտնէ Սրբազան հօր այս նախաձեռնութեան համար եւ անգամ մը եւս կու գայ հաստատելու, որ Հայաստանեայց Առաքելական եկեղեցին, իր ազգայնական յանդուգն կեցուածքով ու գործունէութեամբ, պատուար հանդիսացած է օտար ազգերու ստեղծած փոթորիկներուն դէմ եւ Հայու ինքնուրոյնութեան պահպանման մէջ իր մեծ դերակատարութիւնը ունեցած հայոց հին թէ նորագոյն պատմութեան մէջ:



**Ուրբ., 27 Օգոստոս** – Սրբազան Հայրը իր շաբաթական փոտքասթ-պատգամը հեռարձակեց Սիրոյ մասին: Ան անդրդարձաւ Հօր եւ Որդուոյ փոխադարձ սիրոյն եւ այդ սիրոյն յաւիտենականութեան: Սրբազանը նաեւ բացատրութիւն տուաւ « սիրէ ընկերդ ինչպէս կը սիրես քու անձդ» եւ «սիրեցէք ձեր թշնամիները եւ օրհնեցէք ձեզ անիծողները» Քրիստոսի տուած պատուէրներուն մասին: Կը յանձնարարենք մանրամասնութիւններուն մասին ակնդրել վարի յղումը (Լինքը):

<https://www.facebook.com/watch/ArmenianApostolicChurchofHolyResurrection/>

**Շբ., 28 Օգոստոս** – Սրբազան հայրը նախագահեց Թեմական առցանց արտահերթ ժողովին, որ որպէս օրակարգ ունէր 30 Օգոստոսին կայացած Համայնքային կազմակերպութիւններու միացեալ մարմնի ժողովը եւ Նշան սարկաւազ Պասմաճեանին սարկաւազական լիազօրութիւններ տալու հարցը, որուն շնորհիւ ան պիտի կարենայ աւելի լաւ ծառայութիւն մատուցանել թէ Նոր Զելանտայի համայնքին թէ՛ Էքիւմենիք ընտանիքին:

**Բշ., 30 Օգոստոս** – Նախագահութեամբ Սրբազան Հօր առցանց ժողով մը տեղի ունեցաւ մասնակցութեամբ Հայ համայնքի հոգեւոր, քաղաքական եւ բարեսիրական կազմակերպութիւններու, Աւստրալիոյ մէջ Արցախի մնայուն եւ Բայտի քաղաքապետութեան ներկայացուցիչներու, քննարկելու համար իրաւաբան Պարոն Էմանուէլ Գրգեաշարեանի պատրաստած տեղեկագիր-ուսումնասիրութիւնը Աւստրալահայ համայնքին մասին, Արցախեան պատերազմի լոյսին տակ: Ժողովին իր մասնակցութիւնը բերաւ նաեւ ուսումնասիրութեան հեղինակ Պրն Էմանուէլ Գրգեաշարեանը: Այս ժողովը շարունակութիւնն է այն ժողովներուն, որոնք սկիզբ առած էին Արցախեան պատերազմի առաջին օրերուն եւ որոնց մասին Փարոս օրին զեկուցած է: Սիրալիր եւ համագործակցութեան մթնոլորտի մէջ ընթացաւ ժողովը, եղան կառուցողական առաջարկներ համայնքային համադրուած աշխատանքի ի նպաստ:

**Լսարանական Երեկոյ - Առցանց**  
**Հայ Եկեղեցին Հայ Պետականության Կողքին – Բ. Մաս**  
**Դասախօս – Բարձր. Տէր Հայկազուն Արքեպիսկոպոս Նաճարեան**  
**25 Օգոստոս 2021**

**Մարգպանական Շրջան**

428-650 թուականն է կը սկսի Մարգպանական շրջանը Պարսկական Հայաստանի տարածքին մէջ: Հայ նախարարները կը կարծէին որ ուղղակի Պարսկաստանի մայրաքաղաք Տիզբոն կապուելով իրենց վիճակը պիտի թեթեւնար, սակայն չարաչար կը սխալէին: Առաջին շրջանին, Պարսիկները մեղմ քաղաքականութիւն վարեցին պահելով նախարարական ասանդական պաշտօնները: Նաեւ Եկեղեցոյ իրաւասութիւնները պահպանուեցան՝ դատական իրաւասութիւններով, տուրքէ ազատ մնալով եւ բանակ չձառայելով: 444-ի Շահապիւանի ժողովին կը մանակցին նախարարներ եւ եկեղեցականներ: Մծղնէութեան աղանդին պատճառով առաջացած անկարգութիւնները վերացնելու համար, խիստ որոշումներ կ'առնուին, որոնց ոյժի միջոցաւ գործադրումը կը վստահուի իշխաններուն: Սոյն ժողովը նաեւ կ'ընտրէ Յովսէփ, որ տեղապահ էր, կաթողիկոս, այսպիսով կաթողիկոսութեան ընտրութեան տալով ազգային եկեղեցական նկարագիր: Առաջին Մարգպանը որ նշանակուեցաւ՝ Պարսիկ էր, Վիհմիհրշապո: Սպարապետութիւնը պահեցին Մամիկոնեանները, Հագարապետութիւնը՝ Ամատունիները, Մաղխագութիւնը՝ Խորխորունիները իսկ Դատականը՝ եկեղեցին: Սակայն այս բոլորը շուտով փոխուեցան, որովհետեւ Պարսիկները իրենց հիմնական նպատակէն չէին շեղած, որն էր Հայերը ամէն գիտով կտրել Բիւզանդիոնէն եւ միանգամընդմիջտ կապել Պարսկաստանին: Հետեւաբար, առաջ պիտի քաշուէին այն նախարարները, որոնք Պարսկական շահերուն կը ծառայէին: Բանակը, որ առաջ Հայաստանի սահմանները կը պաշտպանէր, այժմ Հայկական գունդեր էր, սեպուհներով եւ իշխաններով եւ հոն ուր Պարսից արքունիքը կը կամենար, այնտեղ կ'ըլլար, օրինակ հիւսիսային ցեղերուն դէմ կռիւի կամ արեւելեան Պարսկաստանի սահմանները, եւ՝ անորոշ ժամկետով:

Նուարսակի դաշնագրով (484թ), ստորագրողները 18-ը Հայ նախարարներն ու 17-ը Հայ եկեղեցոյ ներկայացուցիչներն էին նմանապէս Պատերազմին նահատակուած իշխաններու կը միանային ապագային ապար աշխարհի աքսորուած եւ ապա նահատակուած Հայ եկեղեցոյ ղեկավարները: Ինչպէս Վասակ Սիւնի եւ այլախոհ պարսկամետ նախարարներ, կային նոյնպէս եւ ասոնց միացած որոշ եկեղեցականներ, մեծամասնութեամբ՝ քահանաներ: Պերոզ Կայսր, Պարսից գահ բարձրանալէն քանի մը տարի ետք, ուզեց ինչ որ չափով սիրաշահիլ հայերը: Հալածանքները թեթեւացան եւ Մեսրոպեան աշակերտներէն Գիւտ ընտրուեցաւ կաթողիկոս 461թ.ին: Իսկ Շուրջ 462թ.ին, աքսորեալ նախարարներ իրենց գունդերով վերադարձան Հայաստան: Սակայն, Պարսից քաղաքականութիւնը Հայոց նկատմամբ կայուն չէր: 471 թ.ին Գիւտ Տիզբոն կը կանչուի եւ կաթողիկոսութենէ վար կ'առնուի: Որոշ ժամանակ ետք երբ Տիզբոնէն կ'արձակուի, փոխանակ իր կաթողիկոսական աթոռ Դուին վեադառնալու՝ իր հայրենի գիւղը Ռթմուս կը քաշուի: Ինչպէս Ս. Սահակի պարագային, այս պարագային ալ, կաթողիկոսը կը պահէ իր կրօնական հանգամանքը եւ իրաւասութիւնը, միայն քաղաքական իրաւասութիւններէն է որ կը դադրեցուի:

Վահան Մամիկոնեանի կազմակերպած ապստամբութեան առաջին իսկ օրէն, ապստամբութեան ոգի եւ կորով տուողը եղաւ Յովհաննաէ Մանդակունի Կաթողիկոսը: Երբ ան կ'իմանայ Ակոռիի ճակատամարտին Հայոց գունդի տարած յաղթանակը, Դուինի մայր եկեղեցոյ մէջ կը մատուցանէ գոհաբանական աղօթք: Ներսէհապատի ճակատամարտին, կաթողիկոսը ուղղակի կ'ընկերակցի Վահանի գունդին եւ

յաղթական աւարտէն ետք կ'օրհնէ Հայ քաջարի ռազմիկները: Իսկ Դուինի մօտ իրենց թիւի նուագելուն պատճառով Հայերը չեն կրնար դիմադրել Պարսից եւ կը նահանջեն: Յովհան Կաթողիկոս պատերազմին կը վիրաւորուի սակայն կը կարողանայ նահանջողներուն միանալ:

Նուարսակի դաշնագրով Հայ եկեղեցին ազատ կը հռչակուէր եւ իրեն կը վերադարձուէին նախկին բոլոր իրաւասութիւնները: Նոյնպէս, նախարարներուն կը վերադաձուէին իրենց իրաւունքները: Պարսից արքան անձամբ պիտի լսէր Հայոց դէմ եղած ամբաստանութիւնները եւ արդար որոշում պիտի կայացնէր:

508թ.ի Դուինի Բ. Ժողովին, Բաբգէն կաթողիկոս, Տարօնի Մերշապուհ եպիսկոպոս եւ եկեղեցւոյ այլ մեծամեծներ, զօրաւիզ ունենալով մարզպան Վարդ Մամիկոնեանը, Սահակ Կամսարականը եւ Արտաշիր Մաղխադին, կը գրեն Հայ եկեղեցւոյ դաւանանքը ընդդէմ Քաղկեդոնի եւ Նեստորականութեան: Ըստ Ասորի պատմիչ Շմաւոն Բեթարշամացիին, Հայոց այս գրութիւնը ներկայացուցաւ Պարսից արքունիք, որը Կաւատ թագաւոր հաստատեց իր կնիքով: Այս շրջանին Հայ եկեղեցին նախամեծար կը համարուի յաչս Վրաց, Աղուանից եւ Ասորի եկեղեցիներուն: Քրիստափոր կաթողիկոսի կողմէ ձեռնադրուած (535թ.) Մար Մաթայի մետրոպոլիտ Գարմայի յաջորդները իրենց ձեռնադրութիւնը հաւանաբար ստացած են Հայ կաթողիկոսներէն: Նոյնպէս, 549-ին, Աբդիշոյ, պատգամաւորութեամբ մը, Նփրկերտէն կը ներկայանայ Ներսէս կաթողիկոսին՝ ձեռնադրութեան խնդրանքով: Պարսկաստանի մէջ Նեստորականները սկսած էին նեղութիւն պատճառել Ուղղափառներուն, այդ պատճառով անոնք դիմած էին Հայ եկեղեցւոյ օգնութեան: 555 թ.ին Ներսէս Բ Բագրեւանդացի կաթողիկոս, Դուինի մէջ, կը գումարէ Ժողով մը ընդդէմ Նեստորականութեան: Ժողովին կը մասնակցին 18 եպիսկոպոսներ եւ 34 նախարարներ եւ իշխաններ: Այս ժողովը կը հռչակէ կանոններ, նպատակ ունենալով վերահաստատել քրիստոնէական կեանքը Հայոց մէջ: Այս կը վերաբերէր եւ աշխարհականներու եւ եկեղեցականներու: 571 թ.ին Սուրէն Պարսիկ Մարզպանը սպաննել կուտայ Մանուէլ Մամիկոնեանը, թոռը՝ Վարդ Մարզպանին: Այս պատճառ կը դառնայ որ Հայեր ապստամբին Վարդան Բ. Մամիկոնեանի ղեկավարութեամբ եւ Յովհաննէս Գաբեղեան կաթողիկոսի գործուն մասնակցութեամբ: Հակառակ սկզբնական յաջողութիւններու Պարսիկներու նոր հասնող զօրաւոր բանակին չդիմանալով Հայ ղեկավարները կ'անցնին Պոլիս յուսալով որ Յոյները կը միջամտեն: Յոյները չեն ուզեր խառնուիլ: Յովհաննէս կաթողիկոս կը մահանայ Պոլսոյ մէջ 574թ.ին:

### **Երկրորդ Բաժանում**

590 թուականի շուրջ, Սօրիկ կայսեր օրով, Պարսիկներ տկարանալով Հայաստանի մեծ մասը կը զիջին Յոյներուն: Դուինը կը մնայ Պարսկական շրջանին մէջ ուստի Սօրիկ կայսրը Յովհաննէս Բագւանցիին կը նշանակէ քաղկեդոնական կաթողիկոս, հաստատելով անոր աթոռը Աւանի մէջ, Յունական սահմանէն ներս, Դուինէն ոչ շատ հեռու: Բնականաբար Յունական շրջանի 21 եպիսկոպոսներուն կը պարտադրուի Քաղկեդոնականութիւնը, սակայն կային նաեւ ընդդիմացողներ, գլխաւորները՝ Մանասէ Բասենի եւ Յովհաննէս Ամատունեաց եպիսկոպոսները: Հայ իշխաններ ոչ միայն կը պարտադրուին ընդունիլ Քաղկեդոնականութիւնը, այլեւ դուրս բերուելով Հայաստանէն կը տարուին Պուլկարիա, կռուելու համար այդ կողմերու բարբարոսներուն դէմ:

599թ.ին, Սմբատ Բագրատունի, արեւելեան ազգերուն դէմ մղած իր յաջող պատերազմներուն համար կ'արժանանայ մեծ կոչումներու եւ յարգանքի Պարսից Խոսրով արքային կողմէ: Սմբատ, տեսնելով աքսորուած եւ անտերունչ մնացած Քրիստոնէաներ, որոնց մէջ եւ Հայեր, որոնք իրենց լեզուն կորսնցուցած էին, ոչ միայն հոգ կը տանի անոնց հոգեւոր կարիքներուն այլ եւ Աբել անունով քահանայ մը կը նշանակէ որ ուսուցանէ անոնց իրենց մայրենին: Մովսէս Կաթողիկոս, 604թ.ին, եպիսկոպոս մը կ'ուղարկէ այդ շրջանը, զայն թեմի վերածելով, ենթակայ Հայոց կաթողիկոսին: Վրկանի Հայ մարզպանը Սմբատ, կը կարողանայ արձակուրդ առնել իր պաշտօնէն եւ գալ Հայաստան կարգաւորելու Հայ

եկեղեցույ խնդիրները: Անոր կոչով, 607թ.ին, Հայաստանի երկու կողմերու 40 եպիսկոպոսներ եւ 390 եկեղեցականներ, վանահայրեր եւ վարդապետներ ի մասնաւորի Յունական շրջանէն՝ Թեոդորոս Մարդպետական, Ստեփանոս Բագրեւանդայ, Մովսէս Խորիտրունեաց, Քրիստափոր Ապահունեաց եւ Ներսէս Վանանդայ, իսկ վանահայրերէն՝ Ս Յովհաննէս Բաբելասը եւ Աւանի Յովնանը կը մասնակցին ժողովին եւ հաւատքի գիր ստորագրելով կ'ընտրեն Աբրահամ Ա. Աղբաթանեցին՝ Կաթողիկոս, 607-615 թ.ին: Ի հարկէ, Յունական շրջանի իշխաններ, զգուշանալով կայսրէն, կը խուսափին ժողովէն: Պաշտօնի վրայ եղող Հայ իշխաններէն կը յիշուին՝ Սմբատ Մարգպանի, Գիգ Դաշտկարանի եւ Վրթանէս Տեղապահ- վարդապետ Հայոց Շարսաղարի: Այս շրջանին է նաեւ, 608.թին, որ Վրաց եկեղեցին, Կիւրոնի գլխաւորութեամբ, ընդունելով Քաղկեդոնականութիւնը, կը բաժնուի Հայերէն: Սմբատ Վրկան Մարգպանը կը կարողանայ Սիւնեաց երկպառակութիւնը լուծել Հայոց Կաթողիկոսին հետ, Սիւնեաց Սահակ իշխանի գործակցութեամբ: Քիչ ետք, Աղուանքի հետ Հայոց կաթողիկոսը լեզու գտնելով, զայն կը պահէ Հայաստանեաց եկեղեցույ ծիրէն ներս: Շուրջ 610 թ.ին Խոսրովի բանակները, Պարսկաստանէն առաջ շարժելով, կը գրաւեն Փոքր Հայքի քաղաքները եւ շատ գերիներ կը տարուին Պարսկաստան անոնց մէջ նաեւ Յովհան հակաթոռ կաթողիկոս Բագարանցին, որ տարի մը ետք կը վախճանի:

Ինչպէս Պարսից մէջ եղած Քրիստոնէաներ կը դիմեն Հայոց Կոմիտաս Կաթողիկոսին օգնութեան համար, նոյնպէս երբ Պարսիկները կը գրաւեն Երուսաղէմը 614-ին, տեղւոյն Յոյն Պատրիարքի տեղապահ Սոգեստոսը կը դիմէ Հայոց, որ շարունակէ Երուսաղէմի Քրիստոնէաներուն պաշտպան կանգնիլ:

Քրիստափոր Բ. Ապահունի, 628-630, գահ բարձրացած էր Թեոդորոս Ռշտունի Սպարապետի հովանաւորութեամբ, որ հակայոյն քաղաքականութիւն կը վարէր: Վարագոսիբոց, իր հօր Սմբատ Բագրատունիի մահէն ետք, Հայոց Մարգպան եղած էր: Հակառակ իր դաստիարակութեան եւ պաշտօնին, ժամանակի բերումով աւելի Յոյներու կողմը թեքած էր , մանաւանդ Հերակլի յաղթարշաւի ընթացքին՝ 628-630: Ան ճնշում կը բանեցնէ Քրիստափորի վրայ, որն եւ հրաժարելով Կաթողիկոսական գահէն կ'անցնի ճգնաւորական կեանքի: Ընտրուած Եզր կաթողիկոս Յունական թեքում ունէր. եւ երբ Հերակլ կայսրը Կարինի մէջ առաջարկեց Եզրին հաւատքի միասնութեան թուղթ ստորագրել, վերջինս կատարեց զայն եւ հաղորդուեցաւ Կայսեր հետ միասին: Կայսրը, գոհ մնալով Հայոց կաթողիկոսէն, նուիրեց Կողբի գիւղաքաղաքի մէկ երրորդը եւ անոր ողջ աղիհանքը: Իհարկէ կաթողիկոսը այնքան դիրքութեամբ չէ որ ընդունած էր այս բոլորը: Հայոց Յունական բաժնի Սպարապետ Մժէժ Գնունի սպառնացած էր որ եթէ կաթողիկոսը չընդունի կայսեր հրաւերը, ապա Յունահայոց վրայ կայսրը այլ կաթողիկոս մը պիտի նշանակէ, ինչպէս Մօրիկ կայսր 590 ին ըրած էր Յովհան Բագարանցին հակաթոռ նշանակելով Աւանի մէջ: Եզր Կաթողիկոս խորհրդակցած էր այս մասին Թեոդորոս Ռշտունիին հետ որ գործնական օգնութիւն չէր կրցած տալ իրեն: Ժամանակաւոր երերւոյթ մըն էր, Կայսեր պարտադրանքին տակ, որը եկեղեցին եւ Հայ ժողովուրդը պիտի չ'ընդունէին:

### **Արաբական շրջան 650-885**

Արաբներու սկզբնական արշաւանքները, 640թ., հետախուզական բնոյթ ունէին: Աոնք Մոկաց աշխարհէն կը մտնեն Տարօն: Հայեր լուրջ դիմադրութիւն չեն կրնար տալ: Կ'աւերուին Աշտիշատը, Գլակը եւ Մատնավանքը: Երեք ամսուան պաշարումէ ետք կը գրաւեն Դուինը 12000 մարդ կը կոտորեն եւ 35000 հոգի գերի կը տանին: Թեոդորոս Ռշտունի կը յաջողի Մուսվիհայի հետ համձայնութիւն կնքել, որով Հայերը կ'ընդունին Արաբներու գերիշխանութիւնը, Արաբական բանակը մուտք պիտի չգործէ Հայաստան, երբ պէտք ըլլայ Հայկական բանակը պիտի միանայ արաբներու արշաւանքին, Արաբներն ալ պիտի օգնեն Հայոց եթէ անոնք յարձակումի ենթարկուէին: Տուրքերը Հայերը պիտի հաւաքէին եւ փոխանցէին Արաբներուն: Հայ եկեղեցին ազատ պիտի մնար տուրքէ եւ շարունակէր իր դերը Դատական ոլորտէն ներս: 661-ին, երբ Մուսվիհ Խալիֆ կ'ընտրուի Թեոդորոսի յաջորդ կը նշանակէ Գրիգոր Մամիկոնեան (661-681) նոյն պայմաններով, մինչեւ Աբբասեաններու խալիֆայութեան հաստատուիլը Պաղտատի մէջ

743ին: Տեսանք թե ինչպես Եզր կաթողիկոս եւ Հերակլ կայսր կրօնական համաձայնութեան եկած եւ հաղորդուած էին: Երբ Յոյները զօրանալով Արաբները դուրս մղեցին Հայաստանէն, նոյնպէս ըրին Ներսէս Գ Իշխանցի եւ Կոստանդ Կայսր, Դուինի մէջ 652ին: Երբ Յուստինիանոս Բ կայսրը 685թ., նուաճել տուաւ Հայաստանը իր զօրավար Ղեւոնդիոսի միջոցաւ, 25 գաւառներ քանդեց եւ 8000 տուն հայեր գերի տարուեցան: Իսկ 693-ին, կայսրը ինք արշաւեց Հայաստան եւ նորէն Քաղկեդոնի ժողովի հարցը Հայոց առջեւ դրուեցաւ, սակայն Սահակ Կաթողիկոս եւ շարք մը եպիսկոպոսներ չհամաձայնեցան կայսեր հետ, ուստի Սահակ կաթողիկոս եւ հինգ եպիսկոպոսներ աքսորուեցան Պոլիս եւ հոն մնացին մինչեւ Յուստինիանոս Բ Կայսեր գահազրկուիլը 695 թ.ին:

Շուրջ 700թ.ին, Արաբ ոստիկան Ապտուլլահ խստացուց իր քաղաքականութիւնը, Հայաստանի մէջ հալածելով եկեղեցին եւ չարչարելով իշխաններն ու ազատները: Նոյնիսկ Սահակ կաթողիկոս եւ Սմբատ Պատրիկ ձերբակալուելով Դամասկոս աքսորուեցան, սակայն Սմբատ փախուստի դիմելով ըմբոստութեան դիմեց եւ կարգ մը յաղթանակներ տարաւ Արաբներուն դէմ, սակայն ի վերջոյ տկարանալով արաբական մեծ բանակին դիմաց քաշուեցաւ Տայոց գաւառը: Յոյներէն օգնութիւն չկար եւ խուժող Արաբական բանակին իրաւունք տրուած էր քանդել, այրել երկիրը, կործանել եկեղեցիները եւ գերել ժողովուրդը: Յոյները այս շրջանին անկարող էին օգնութեան հասնելու Հայերուն, Հայ իշխաններ ստիպուած էին լեզու գտնել Արաբներուն հետ երկիրը կործանումէ փրկելու համար: Անոնք դիմեցին Սահակ Կաթողիկոսի միջնորդութեան: Կաթողիկոսը կրցաւ համոզել Ապտուլմելիք Ամիրապետը, թէ ինք պատրաստ է միջնորդելու որ Հայեր հպատակին Արաբներուն եւ հարցը լուծել առանց արինահեղութեան: Ամիրապետը կ'ուղարկէ կաթողիկոսը Ոկրայ զօրավարին անոր հետ լեզու գտնելու համար:

Կաթողիկոսը Դամասկոսէն ճամբայ կ'ելլէ հանդիպելու Ոկրային սակայն ճանապարհին Ասորիքի - Խառանի մէջ կը վախճանի: Սակայն հեռատես կաթողիկոսը նամակ-խնդրանք մը պատրաստել կու տայ նախքան մահանալը, զոր Ոկրան իր ձեռքէն առնելով կը կատարէ Սուրբին վերջին փափաքը: Այս ձեռով գոնէ ժամանակաւոր կերպով խաղաղութիւն կը տիրէ Հայաստանի մէջ:

Շուրջ 719 թ.ին Յովհաննէս Օձնեցի կաթողիկոս կ'երթայ Դամասկոս հանդիպելու Էօմէր Ամիրային, ի հարկէ նպատակը իր պարթեւ հասակը կամ շքեղ զգեստները ցոյց տալ չէր: Կաթողիկոսը կը խնդրէ որ քրիստոնէութիւնը ազատ ըլլայ Հայոց համար եւ եկեղեցականները տուրքէ զուրկ կացուցուին: Հաւանաբար իր խնդրանքին վրայ է որ նաեւ գերավարուած նախարարներ ազատ կ'արձակուին: Ասոնց դիմաց Կաթողիկոսը կը խոստանայ որ Հայ ազգը հաւատարմօրէն պիտի ծառայէ ամիրայապետին:

Արբասեաններու օրօք տուրքերը կը բարձրանան, Հայ իշխաններ կ'ընդվզին, ոմանք ձերբակալուելով կամ կ'աքսորուին կամ կը նահատակուին: Ոմանք կեղծ ուրացութիւն կ'ընդունին, ուրիշներ, թողելով իրենց կալուածները, կ'անցնին Յունական կողմը ինչպէս Շապուհ եւ Համամ Ամատունի իշխանները, որոնք շուրջ 12000 ժողովուրդով կ'անցնին Յունական գաւառներ 786: 788ին, Եսայի Ա կաթողիկոսի մահէն ետք, Արաբ Իբն Դոկէ հարկահանը կաթողիկոսի անժառանգ ըլլալը պատճառաբանելով, կը յափշտակէ Կաթողիկոսին հարստութիւնը, ոսկեայ եւ արծաթեայ սպասներ, թանկագին քարեր թագաւորական զգեստներ, որոնք նուիրուած էին եկեղեցոյ սուրբ սեղանին: 795-ին Յովսէփ Փարպեցի կաթողիկոս կը պաշտպանէ հայրապետական կալուածները, դաստակերտներ եւ ազարակներ՝ Կաւակերտ եւ Հոռոմոց մարզը, սակայն կը կորսնցնէ Արտաշատը յանձն առնելով բանտ, շղթաներ եւ չարչարանք:

Յատկապէս ծանր էին Բուղայի բռնութիւնները: 850-ի սկիզբները շատ եկեղեցիներ քանդուեցան եւ եկեղեցականներ իշխաններու հետ նահատակուեցան Իսլամը չընդունելուն համար:



**Ընտրության հարց.**

833-ին, երբ Յովհաննես Ովայեցի Կաթողիկոսական գահ կը բարձրանայ: Հակառակ Բագարատ իշխանի համաձայնության ան ունէր Սմբատ Սպարապետի եւ Գրիգոր Սուփան Սիւնեաց Տէր իշխանի հովանաւորութիւնը: Երբ առիթը կը ներկայանայ, Բագարատ Պատրիկ կը բռնադատէ Կաթողիկոսը, որ իր հրաժարականը տալով կը քաշուի Այրիվանք, սակայն նախ նամակ մը կը գրէ, ուր իր անմեղութիւնը կը պաշտպանէ: Նախարարներ եւ եպիսկոպոսներ ժողով մը կը գումարեն, ուր յայտ կուգայ, որ իր բարոյականին մասին եղած գրպարտութիւնները կեղծ էին եւ Կաթողիկոսը կը վերահաստատուի իր գահին, որ Բուղայի արշաւանքներուն պատճառով կը քաշուի Դուինէն Գաեղարքունիքի Մաքենեց վանքը, ուր եւ կը վախճանի 855թին:

Հետաքրքրական է Չաքարիա Չագեցու աշխարհական վիճակէն կաթողիկոսութեան բարձրանալը 855թին: Այդ ընտրութիւնը կը վայելէր Սմբատ Ապլաբաս Սպարապետի հովանաւորութիւնը: Ժամանակները ծանր էին եւ կը պահանջէին արտակարգ քայլեր. չենք գիտեր թէ ինչու Չաքարիան աշխարհական վիճակով ընտրուեցաւ կաթողիկոս, երբ մեծ թիւով եպիսկոպոսներ կային: Իսկ Չաքարիան իշխանական ծագում ալ չունէր ինչպէս Գրիգոր Նարեկացու հայրը Խոսրով Անձեւացին, որ թողելով իշխանական դիրքը կարճ ժամանակ ետք զինք կը տեսնենք Եպիսկոպոս: Բայց հաստատ է որ Սմբատ Սպարապետ զօրաւոր կռուան ունէր այս քայլը առնելու համար, որը ընդունելի եղաւ բոլորին կողմէ: Չաքարիա կաթողիկոս, որպէս խորհրդակից եւ գործակից Իշխանաց իշխան Աշոտի, կ'աշխատի խաղաղացնել երկիրը: Այսպէս, Երբ Վասպուրականի մէջ զանազան իշխաններ իրար դէմ կը պայքարին, Չաքարիա Կաթողիկոս, իր հետ ունենալով Աշոտ իշխանը եւ շարք մը եպիսկոպոսներ, կը միջնորդէ որպէսզի Արծրունիներ վերջ դնեն եղբայրասպան եւ ջլատող պայքարին: Չաքարիա Կաթողիկոս կը սիրաշահի Սիւնեցիները, անձամբ ներկայ ըլլալով Իշխան Վասակ Գաբուռի յուղարկաւորութեան, մխիթարելով այրի իշխանուհի Մարիամը եւ իր օրհնութիւնը բաշխելով անոր զաւակներուն: Արտաքին յարաբերութիւններուն մէջ նոյնպէս գործուն, ան անձամբ կը տեսակցի Ամիտի-Միջագետքի ոստիկան Յիսէէին հետ եւ կը շահի անոր մտերմութիւնը : Նաեւ մօտիկ կապեր կ'ունենայ Փոտ Պատրիարքին հետ առանց տեղի տալու Քաղկեդոնականութեան առաջարկներուն: Աշոտ, իր հօր Պաղտատ բանտարկուելէն ետք, 855-ին կը ժառանգէ Սպարապետի պաշտօնը, որը կը բարձրացուի Իշխանաց Իշխանի տիտղոսին՝ 858-ին: Չաքարիա կը ջանայ այդ աստիճանը բարձրացնել թագաւորութեան: Այս բոլորին հիմքը կաթողիկոսին ունեցած բարեկամական կապերն էին:

Չաքարիա Կաթողիկոս կը վախճանի 876-ին սակայն իր յաջորդը, Գեորգ Բ Գառնեցի, կը շարունակէ նոյն քաղաքականութիւնը եւ Աշոտ, 885 թ.ին, կը հռչակուի թագաւոր, ստանալով թագ եւ թագաւորական զգեստներ Ամիրայապետ Ահմէտ-Ապտուլ Ապպասէն: Բիւզանդիոնի Վասիլ Կայսրը նոյնպէս կը ճանչնայ Աշոտը:

————— (Շարունակելի) —————



## ՆՍՕՏՏ ԳԱՐԵԳԻՆ Բ. ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԾՆՆԴԵԱՆ 70-ԱՄԵԱԿ

21 Օգոստոսին Վեհափառ Հայրապետը բոլորեց իր ծննդեան 70-րդ տարին:

Այս առիթով, Բարձրաշնորհ Տէր Հայկազուն Արքեպիսկոպոս Նաճարեան, յանուն Աւստրալիոյ եւ Նոր Զելանտայի Հառոց Թեմի հաւատացեալներուն, եկեղեցական դասին, թեմական խորհուրդին եւ եկեղեցական մարմիններուն, իր շնորհատրանքը ուղարկեց յոբելեար Վեհափառ հօր:

Ստորեւ կը ներկայացնենք Նորին Սրբութեան կենսագրութիւնը մեր ընթերցողները իրազեկ դարձնելու համար Վեհափառ հօր ազգանուէր եւ եկեղեցանուէր հարուստ գործունէութեան: Կենսագրութեան ընդմէջէն Փարոսի ընթերցողները պիտի ծանօթանան նաեւ ազգային եկեղեցական այնպիսի կատոյցներու, որոնց գոյութիւնը կը պարտինք Վեհափառ Հայրապետի տեսլականին եւ անդով աշխատանքին:

Յիշեցնենք որ Վեհափառ Հայրապետը երեք անգամ այցելած է Աւստրալիոյ Հայ համայնքին, անոնց վերջինը՝ Փետրուար 2019ին: Այս այցելութեան ընթացքին, ան պաշտօնական բացումը կատարեց նորակառոյց Առաջնորդարանին, հանդիպում ունեցաւ Հայկական կազմակերպութեանց ներկայացուցիչներուն հետ, այցելեց վարժարաններ նաեւ Հայկազուն Արքեպիսկոպոս Նաճարեանին շնորհեց Արքեպիսկոպոսութեան պատիւն ու տիտղոսը:

### Կենսագրութիւն

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսը (աւագանի անունով՝ Կտրիճ) ծնած է 21 Օգոստոս 1951-ին Էջմիածնի շրջանի Ոսկեհատ գիւղին մէջ: Նախնական ուսումը հայրենի գիւղին մէջ ստանալէ ետք, 1965-ին կ'ընդունուի Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Գեորգեան հոգևոր ճեմարան: Գերազանց առաջադիմութեամբ կ'աւարտէ ճեմարանը, ապա կը նշանակուի տեսուչի օգնական՝ միաժամանակ դասաւանդելով «Նոր Կտակարան» նիւթը: 1970-ի Դեկտեմբեր 25-ին՝ Սուրբ Ստեփանոս Նախասարկաւազի տօնին օրը, կը ձեռնադրուի սարկաւազ: 1972-ին, ձեռամբ Գերաշնորհ Տ. Տիրան Արք. Ներսիսեանի, կը ձեռնադրուի կուսակրօն քահանայ՝ վերանուանուելով Գարեգին արեղայ:



Այնուհետև, երջանկայիշատակ Վազգէն Ա. Ամենայն Հայոց Կաթողիկոսի բարձր տնօրինութեամբ, բարձրագոյն կրօնական կրթութիւնը կը շարունակէ նախ Վիեննայի աստուածաբանական համալսարանի, ապա Գերմանիոյ Պոնն քաղաքի համալսարանին, ինչպէս նաև Ռուս ուղղափառ եկեղեցոյ Սբ. Մերգիոս վանքի եկեղեցական ակադեմիային մէջ:

1980-ին կը նշանակուի Արարատեան Հայրապետական թեմի Առաջնորդական փոխանորդի օգնական, 1983 Ապրիլին՝ Առաջնորդական փոխանորդ: Նոյն տարուան Հոկտեմբերին կը ձեռնադրուի եպիսկոպոս, իսկ 1992-ին կը ստանայ արքութեան պատիւն և տիտղոս:

Առաջնորդական փոխանորդ եղած տարիներուն կատարած է շարք մը նախաձեռնութիւններ:

1989-ին Տ. Գարեգին եպիսկոպոս Ներսիսեանի նախաձեռնութեամբ կը հիմնուի Սևանի Վազգէնեան հոգևոր դպրանոցը: Այսօր, Վազգէնեան հոգևոր դպրանոցի հնգամեայ ուսումնառութիւնը հիմք կը հանդիսանայ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Գեորգեան հոգևոր ճեմարանին մէջ միամեայ ուսումնառութեան համար:

Նորանկախ երկրի երիտասարդ սերունդի արտադպրոցական կրթությունը ապահովելու համար, 1993-ին, Տ. Գարեգին արքեպիսկոպոս Ներսիսեանի նախաձեռնությամբ, Երևանի նախկին կոմունիստական պիոներ-պալատներին երեքը կը վերակազմաւորուին իբրև Հայորդեաց Տներ, ուր հազարաւոր երեխաներ կը ստանան հոգևոր ու գեղագիտական կրթութիւն: Հայաստանի հանրակրթական և կիրակնօրեայ դպրոցներուն մէջ քրիստոնէական դաստիարակութեան սեմինարներ և դասընթացներ կազմակերպելու անհրաժեշտութենէն մեկնելով, Տ. Գարեգին եպիսկոպոս Ներսիսեանի ջանքերով, 1991-ին հիմը կը դրուի Քրիստոնէական Դաստիարակութեան Կեդրոնի ստեղծման:

1995-ին Տ. Գարեգին Արք. Ներսիսեանը կը հիմնէ Շողակաթ հեռուստաընկերութիւնը՝ արխիւային և կրթական տեսանիւթերու միջոցով տարածելու քրիստոնէական հաւատքի առաքելութիւնը:

1995-ին Տ. Գարեգին Արք. Ներսիսեանը կաթողիկոսական ընտրութեան ժամանակ հաւանական թեկնածուներէն մեկն էր: Սակայն, ան քաջեց իր թեկնածութիւնը յօգուտ Գարեգին Ա. Կաթողիկոս Սարգիսեանին: 1998ին, Տ. Գարեգին Արք. Ներսիսեանը, Գարեգին Ա. Կաթողիկոսի կողմէն կը նշանակուի Կաթողիկոսական ընդհանուր փոխանորդ:

1990-1999 ան եղած է Ամենայն Հայոց Կաթողիկոսութեան Գերագոյն Հոգևոր Խորհուրդի անդամ: 1999-ի Հոկտեմբերի 27-ին, փակ քուէարկութեամբ, որը տեղի ունեցաւ Մայր Տաճարին մէջ, Տ. Գարեգին Արք. Ներսիսեանը կ'ընտրուի 132-րդ Ծայրագոյն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոս: Նոյն թուականի Նոյեմբեր 4-ին կը ստանայ Կաթողիկոսական օծում:

Ընտրուելէն անմիջապէս ետք, Ամենայն Հայոց Կաթողիկոսը, յանձն առաւ կատարել ներկեղեցական կեանքի մէջ բարեփոխումներու և վերակազմակերպման դժուարին գործը՝ վերակառուցելով եկեղեցիներ և վանքեր: Ամուր հիմքերու վրայ է դրուած քրիստոնէական կրթութիւնը՝ նոր կեանք և աշխուժութիւն տալով Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հոգևոր կրթարաններուն:

Ուշադրութիւն կեդրոնածցուած է նոր սերունդի հոգևորականներ պատրաստելու գործին՝ ամբողջ աշխարհի Հայ հաւատացեալներուն ծառայելու համար:

## **Հայրապետական այցեր և հանդիպումներ**

Գարեգին Բ. Հայրապետը գահակալութենէն կարճ ժամանակ անց առաջին անգամ ուխտագնացութեան մեկնեցաւ Երուսաղէմ:

Ան հայրապետական այցելութիւն տուած է Հայ եկեղեցւոյ շուրջ 40 թեմերու եւ համայնքներու, որոնց ընթացքին հանդիպումներ ունեցած է Հայ համայնքներու ղեկավարներու և անդամներու հետ՝ հաւատաւոր ժողովրդին տալով հայրապետական պատգամ ու օրհնութիւն: Հանդիպումներ ունեցած է նաև աշխարհիկ և կրօնական առաջնորդներու հետ և հանդիսապետած յատուկ արարողութիւններու:

Միջեկեղեցական կապերու ամրապնդման նպատակով Ամենայն Հայոց Կաթողիկոսը այցելած է Քոյր Եկեղեցիներ և հանդիպում ունեցած առաջնորդներու հետ: Հայրապետական այցով եղած է Ռուս, Վրաց, Ղպտի, Եթովպիայի, Պուլկար, Անգլիական Ուղղափառ եկեղեցիներ, Ռումանական Օրթոտոքս, Ֆինլանտայի Լուտերական, ինչպէս նաև այցելած Մալանքարայի Ուղղափառ Սուրիական եկեղեցի, Էքիմենիք Պատրիարքութիւն, հանդիպում ունեցած է էքիմենիք կազմակերպութիւններու բազմաթիւ ներկայացուցիչներու և առաջնորդներու հետ:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը բազմաթիւ հանդիպումներ ունեցած է այլ կրօններու պետերու և ներկայացուցիչներու հետ: 2010-ի Ապրիլին, Պաքուի մէջ (Ադրբեջան) տեղի ունեցաւ Մոսկուայի և Համայն Ռուսիոյ պատրիարք Քիրիլ Ա.ի, Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի և Կովկասի իսլամներու հոգևոր պետ Շեյխ Ուլ-Իսլամ Ալլահ Շիքիւր Փաշա-Ջատէի եռակողմ հանդիպումը: Երեք պետերը ստորագրեցին համատեղ հռչակագիր՝ Լեռնային Ղարաբաղի հարցի խաղաղ կարգաւորման շուրջ: Անկախութենէն ի վեր, Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը Հայ բարձրաստիճան ներկայացուցիչներէն միակն է, որ այցելած է Ադրբեջան:

Վեհափառը մասնակցած է բազմաթիւ խաղաղասիրական նախաձեռնութիւններու և ֆորումներու, աշխարհիկ և կրօնական համաժողովներու և էքիմենիք հաւաքներու: 2013ի Նոյեմբերին, Հարաւային

Քորեայի Պուսան քաղաքի Եկեղեցիներու Համաշխարհային Խորհուրդի 10-րդ ժողովին ժամանակ, Գարեգին Բ ընտրուած է ուր նախագահներէն մէկը՝ ուր տարի ժամկետով:

Ներկեղեցական կեանքին մէջ մեծ նշանակութիւն ունեցաւ 2013ի Մեպտեմբերին տեղի ունեցած Եպիսկոպոսաց ժողովը: Այս առաջին անգամ գումարուեցաւ Ամենայն Հայոց և Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսներու նախագահութեամբ և երկու կաթողիկոսութիւններու եպիսկոպոսներուն մասնակցութեամբ:

### **Եկեղեցաշինութիւն**

Վեհափառի գահակալութեան տարիներուն օծուած են բազմաթիւ նորակառոյց եկեղեցիներ, կատարուած է նոր եկեղեցիներու հիմնօրհներք, աւարտած են պատմական վանքերու և վանական համալիրներու վերակառուցման աշխատանքներ:

2001-ի Մեպտեմբեր 23-ին, Վեհափառ Հայրապետի ձեռամբ, կատարուեցաւ Երևանի Ս. Գրիգոր Լուսաւորիչ մայր տաճարի օծումը, որը Հայաստանի քրիստոնէութեան որպէս պետական կրօնք ընդունման 1700-ամեակի տօնակատարութիւններուն մաս կը կազմէր: Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տաճարը աշխարհի ամենամեծ հայկական եկեղեցին է:

## **ՄՍՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱՍԻ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ և ԿԱՌՈՒՑՄԱՆ ԾՐԱԳԻՐԸ ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԳԱՀԱԿԱԼՈՒԹԵԱՆ ՏԱՐԻՆԵՐՈՒՆ**

### **Նոր շինութիւններ**

- Ս. Տրդատ Բաց խորան և Ս. Գրիգոր Լուսաւորիչի դարպաս
- Գէորգեան հոգևոր ձեմարանի հանդիսութիւններու սրահ
- Ս. Հրեշտակապետաց եկեղեցի
- Ս. Վարդան և Ս. Յովհաննէս Մկրտիչ մատուռ-մկրտարան

- Դիւանատուն
- Գէորգ 6-րդ էքիմենիք կեդրոն
- «Վաչէ և Թամար Մանուկեան» ձեռագրատուն
- Միաբանական շէնք
- Գարեգին Ա կրթական կեդրոն
- Վարչական շէնք
- Ճաշարան
- Հայրապետական երևանեան նստավայր
- Հայրապետական միջոցառումներու կեդրոն
- Մումավառութեան սրահ և հայրապետական գերեզմանատուն

### **Վերանորոգումներ**

- Մայր Տաճար և թանգարան
- Գէորգեան հոգևոր ձեմարան
- Խրիմեան թանգարան
- Վանատուն



- Տպարան և գրատուն
- Հին վեհարան և թանգարան
- Մարկաւագական կացարաններ
- Ռուբէն Սևակ թանգարան
- Վեհարան
- Երեմեան խցեր



Վեհափառ հօր շինարարական գործունէութիւնը կը ներառէ նաև մի քանի ծրագիրներ Վաղարշապատ քաղաքին մէջ: Անոնց կարգին՝ Վաղարշապատի Ատամնաբուժական կեդրոնը, Էօրնեկեան հանրակրթական դպրոցն ու մանկապարտէզը, Ներսիսեան անտառն ու խաղահրապարակը, ինչպէս նաև խնամքի կեդրոն՝ մեծահասակներու համար:

### Ազգաշինութիւն

Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի գահակալութեան տարիներու կարևոր ձեռքբերումներէն է ՀՀ Կառավարութեան և Հայ եկեղեցւոյ միջև 2000թ. Մարտին ստորագրուած փոխհամաձայնութեան յուշագիրը, որով կողմերը համաձայնեցան եւ յստակացուցին բանակի հոգևոր ծառայողներու գործունէութեան ոլորտը, կառուցուածքը, խնդիրներն ու նպատակները:

Յուշագրին հետ կապուած, 2000թ. Սեպտեմբերին ստորագրուեցաւ համատեղ համաձայնագիր Ազգային բանակին եւ Հայ եկեղեցւոյ հոգևոր սպասաւորութեան վերաբերեալ, որը ԶՈւ հոգևոր սպասաւորութեան ոլորտին մէջ նոր էջ մը բացաւ:

2002-ի Օգոստոսին ստորագրուեցաւ Հայոց եկեղեցւոյ պատմութիւն նիւթը հանրապետութեան բոլոր դպրոցներուն մէջ դասաւանդելու համաձայնագիրը:

2014-ին ստորագրուեցաւ փոխհամաձայնութեան յուշագիր, որով կը նախանշուի «Բանտերու հոգևոր սպասաւորութեան» ծառայութեան գործունէութիւնը ՀՀ Քրեակատարողական հիմնարկներուն մէջ:

Շարունակելով աշխատանքը, գործունէութիւնը ընդլայնուեցաւ երիտասարդական ծիրէն ներս: Հայ Բարեգործական Ընդհանուր Միութեան աջակցությամբ և հովանաւորութեամբ աւելացան Հայորդեաց տուններու թիւը, որոնք կը գործեն Էջմիածնի, Աշտարակի, Կիւմրիի, Վանաձորի և Երևանի Նորք, Մալաթիա և Արաբկիր համայնքներուն մէջ: Բացուեցաւ նաև Քանաքեռի Մանրանկարչութեան կեդրոնը: Հայորդեաց տուններուն կից կը գործեն նաև բարեգործական ճաշարաններ, որոնց թիւը օրէ օր կ'աւելնայ:

Յոյս կազմակերպութեան և Հիւսիսային Ամերիկայի Արևելեան թեմի աջակցութեամբ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հովանիին ներքոյ կը գործէ Նազգաշեան մանուկներու տունը, որը իր յարկին տակ կ'ընդունի ծնողազուրկ, կարիքաւոր և *ռիսկային* խումբերու երեխաները:

Ամենայն Հայոց Կաթողիկոսի կողմէն ուշադրութեան արժանացան Երևանի Իզմիրլեան և Ներսէս Մեծ գիտաբժշկական կեդրոնները: 2001էն հիւանդանոցը կը գործէ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հովանիին տակ:

Հիւանդանոցը յատուկ և *ռիսկային* խումբերու համար կու տայ անվճար բժշկական ծառայութիւն՝ նախնական զննում և խորհրդատուութիւն: Հիւանդանոցի բժշկական օգնութիւնը հասանելի է նաև հանրապետութեան մարզերուն մէջ:

### Ապագայ Կառոյցներ

Գահակալութեան առաջին իսկ տարին Վեհափառ Հայրապետը հիմնադրեց «Գարեգին Ա» աստուածաբանական-հայագիտական կեդրոնը: Նոյն շէնքին մէջ կը գտնուի Վաչէ և Թամար Մանուկեան գրադարանը: Հարուստ գրադարանը մեծապէս կը նպաստէ Մայր Աթոռի միաբաններու գիտական և աստուածաբանական մտքի զօրացման: Կեդրոնին մէջ աշխատելու և գրականութեան հարուստ հաւաքածոյէն օգտուելու հնարաւորութիւն տրուած է նաև Հայ և օտարազգի մտաւորականներուն:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը մեծ կարևորութիւն կու տայ հոգևորականներու նոր սերունդի ձևաւորման: Վեհափառին ջանքերով Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հոգևոր կրթօճախները նոր զարթօնք ապրեցան:

Կիւմրիի ճեմարանին շրջափակին մէջ բացուեցաւ Հառիճավանքի «Թրքանճեան ընծայարան» աւագ դպրոցը, ուր աստուածաբանական կրթութիւն կը ստանան բազմաթիւ երեխաներ:

2002էն ի վեր բաց է Քահանայից լսարանը, ուր եռամեայ հոգևոր կրթութիւն կրնան ստանալ բարձրագոյն կրթութիւն ունեցող այն անձերը, որոնք ցանկութիւն ունին համալրելու հայ հոգևորականներու շարքերը: 2010թ. օգոստոսին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի նախաձեռնութեամբ ստեղծուեցաւ ծիսական յանձնախումբ՝ կազմուած Ամենայն Հայոց Կաթողիկոսութեան, Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան, Երուսաղէմի և Կոստանդնուպոլսոյ Հայոց պատրիարքութիւններու ներկայացուցիչներէն: Հայ Եկեղեցւոյ ծիսական յանձնախումբի աշխատանքները ուղղուած են Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցւոյ առաքելութիւնը առաւել ամրապնդելու եւ արդիւնաւէտ դարձնելու, ծիսական կեանքին առջև ծառայած մարտահրաւերները յաղթահարելու և ծիսական ոլորտը բարեկարգելու:

Գահակալութեան առաջին տարիներուն Շողակաթ հեռուստաընկերութիւնը Երևանէն տեղափոխուեցաւ Մայր Աթոռ, որով աւելի ընդլայնուեցաւ գործունէութեան ոլորտը: Հետագային, Հեռուստատեսութեան և Ռադիոյի Ազգային Յանձնաժողովի կողմէն Շողակաթ հեռուստաընկերութիւնը ստացաւ հեռարձակման իրաւունք:

2012-ին, Ամենայն Հայոց Կաթողիկոսի կողմէն «Ոսկէ Ծիրան» շարժապատկերի փառատօնին կը տրուի Եղիցի Լոյս մրցանակը, անոնց, որոնք նշանակալի ներդրում ունեցած են համաշխարհային շարժապատկերի հոգևոր, մշակութային, մարդասիրական արժէքներու ստեղծման գործին մէջ:

2015թ. Վեհափառին կողմէ սահմանուեցաւ Հայրապետական կրթաթոշակ, որը կը տրուի բարձր առաջադիմութիւն ունեցող ուսանողներուն:

Հայ եկեղեցական կեանքին մէջ տեղի ունեցած են հետևեալ կարևոր իրադարձութիւնները: Քրիստոնէութեան ընդունման 1700 ամեակին նուիրուած տօնակատարութիւններու կազմակերպում, Սրբալոյս Միւռնի օրհնութիւն, Սրբադասման արարողութիւն՝ Հայոց Ցեղասպանութեան 100-ամեակին առիթով:

Գահակալութեան տարիներուն կազմակերպուեցաւ Եկեղեցական-Ներկայացուցչական ժողովը, ուր քննարկուեցաւ եւ ընդունուեցաւ Թեմական Կանոնադրութեան ուղենշային փաստաթուղթը: Ամենայն Հայոց Հայրապետի ձեռամբ, առ այսօր, քահանայական ձեռնադրութիւն են ստացած 350 հոգևորականներ և 27 եպիսկոպոսներ:

## **Մրցանակներ և Կոչումներ**

Նորին Սրբութիւնը «Հայաստան» Համահայկական Հիմնադրամի հոգաբարձուներու խորհուրդի անդամ է, Հայկական բարեգործական ընդհանուր միութեան հոգաբարձուներու խորհուրդի պատույ անդամ, ինչպէս նաև «Մատենադարանի բարեկամներ» բարեգործական հիմնադրամի նախագահն է:

Նորին Սրբութեան շնորհուած է Արցախի և Երևանի պետական համալսարաններու, ինչպէս նաև Սալեզիանի Պապական համալսարանի պատուաւոր դոկտորի կոչում:

Ամենայն Հայոց Հայրապետին շնորհուած է ՀՀ Գիտութիւններու Ազգային Ակադեմիայի պատուաւոր անդամի կոչում:

## **Հայոց Հայրապետը Պարգևատրուած է նաև**

Յորդանանի բարձրագոյն Ա. կարգի շքանշանով, «Բերթեհեմ-2000», Ռումանիոյ ազգային բարձրագոյն պարգևով, «Ռումանիոյ աստղ» շքանշանով, Ուքրանիոյ Հանրապետութեան «Իշխան Եարոսլավ Իմաստուն» 5-րդ աստիճանի շքանշանով, Ֆրանսայի Պատուոյ Լեգէոնի Հրամանատարի, Ռուս Ուղղափառ Եկեղեցւոյ Սուրբ Անդրէաս Առաքելի բարձրագոյն շքանշանով, Ռուսաստանի Դաշնութեան «Բարեկամութեան շքանշան»-ով, Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան «Գրիգոր Լուսաւորիչ» բարձրագոյն շքանշանով, Հայաստանի Հանրապետութեան «Սուրբ Մեսրոպ Մաշտոց» շքանշանով, «Ուղղափառ ժողովուրդներու միասնութեան ամրապնդման գործին մէջ յատկանշական գործունէութեան, հասարակութեան կեանքին մէջ քրիստոնէական արժէքներու հաստատման և ամրապնդման համար» Ալեքսի Բ. Պատրիարքի անուան և «Վազգէն Սարգսեան» մրցանակներով:



# ԼՈՒՐԵՐ

## ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾՆԷՆ

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ ԽՕՍՔԸ  
ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ 8-րդ ԳՈՒՄԱՐՄԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ ՆԻՍՏԻՆ  
2 Օգոստոս 2021

Մեծարգոյ նախագահ Հայաստանի Հանրապետության,  
Յարգելի նախագահող,  
Յարգելի պատգամաւորներ եւ ներկաներ,

Հայրապետական Մեր օրհնութիւնն ենք բերում ձեզ Ազգային ժողովի 8-րդ գումարման անդրանիկ նիստի առիթով եւ շնորհաւորում նորընտիր պատգամաւորներին:

Այսօր մեր հայրենիք Հայաստանն ու Արցախը դիմակայում են արտաքին եւ ներքին լուրջ մարտահրաւերների՝ յանդիման Ադրբեջանի կողմից շարունակուող ագրեսիայի ու ծաւալապաշտական նկրտումների: Հայրենական կեանքում ծառայած հիմնախնդիրները յաղթահարելու

համար հրամայական է պետական, քաղաքական գործիչների եւ ողջ հասարակութեան համախմբումը, քաղաքացիական պատասխանատուութեան բարձր գիտակցութիւնը, համընդհանուր զգաստութիւնն ու բարեխղճութիւնը: Բոլորիս փափաքն ու ձգտումն է մեր հայրենիքի անվտանգութիւնն ու առաջընթացը, խաղաղ եւ բարեկեցիկ կեանքի կերտումը, որը մեծապէս պայմանաւորուած է նաեւ օրէնսդիր մարմնի եւ ձեւաւորուելիք կառավարութեան գործունէութեամբ:

Այսօր դուք ստանձնում էք ձեր պարտականութիւնները՝ օրէնսդրական նախաձեռնութիւններով կարելոր ներդրում բերելու տնտեսութեան շարունակական զարգացման, գիտութեան, կրթութեան, մշակոյթի առաջընթացի գործում, պաշտպանելու անխաթարութիւնը մեր ինքնութեան ու արժէքների եւ հաստատուն պահելու արդարութիւնն ու իրաւունքը: «*Երանի նրանց, ովքեր իրաւունքն են պահում եւ ամէն ժամ արդարութիւն գործում*», - ասում է Սուրբ Գիրքը (Մաղմ. 105.3)՝ վկայելով, որ արդարութիւնն ու օրինապահութիւնն են գրաւականը երկրի եւ ժողովրդի բարօրութեան ու հարընթաց բարգաւաճման: Օրէնսդրական ձեր գործունէութիւնը՝ արդարութեան եւ իրաւունքի գերակայութեամբ, միտուած պէտք է լինի ձեւաւորելու անհրաժեշտ միջավայր ու հնարաւորութիւններ մեր պետութեան հզօրութեան եւ ապահովութեան, մեր երկրի արժանապատիւ կեանքի համար: Այս նուիրական դարաւոր իղձը իրականութիւն դարձնելու ուղին մեր հայրերի պատգամի իրագործումն է, ովքեր ըստ Աւետարանի ուսուցանել են, որ օրէնքն է մարդու համար, եւ ոչ թէ մարդը՝ օրէնքի (հմմտ. Մարկ. 2.27):

Մեր երկրում տիրող ներկայիս ծանր իրավիճակում եւ տարածաշրջանում առկայ բարդ ու դժուարին հանգամանքներում մենք կենսականօրէն պէտք ունենք միասնութեան, հանդարտութեան, յուզումների ու լարուածութեան թօթափման՝ ատելութեան, վրէժխնդրութեան ու պառակտումների փոխարէն: Մենք ամենքս պէտք է քաջ գիտակցենք, որ ազգային եւ հասարակական համերաշխութեանն այլընտրանք



չկայ: Առաջնահերթօրէն եւ այս խորհրդարանից, կառավարական համակարգից պիտի սերմանուի սերը, փոխհասկացողութիւնը, բարի կամեցողութիւնը հասարակութիւնում: Խորհրդարանական գործունէութեան ընթացքում հնչող քննադատութիւնները թող լինեն միայն կառուցելու եւ սխալները շտկելու նպատակով, ծաւալուող բանավէճերը՝ ճշմարտութիւնը գտնելու, ճշմարտութեան հոգով առաջնորդուելու եւ այդ ճշմարտութեան վրայ խարսխելու օրինայարգ հանրային կեանքը եւ պետութեան կենսագործունէութիւնը:

Հայրապետական Մեր յորդորն ենք բերում ձեզ, որ քաղաքական հայեացքների եւ տեսակետների բազմակարծութեամբ հանդերձ, մեր հայրենիքի եւ ժողովրդի լուսաւոր ապագայի կերտման նոյն ձգտումով աշխատէք համախումբ՝ մեր պետութեան անսասանութեան, ներքին ու արտաքին մարտահրաւերների յաղթահարման, արտագաղթի կանխման, սփիւռքի հետ կապերի ու գործակցութեան առաւել արդիւնատրման ջանքերով: Ամուր պահէք հաւատարմութիւնը մեր հոգեւոր եւ ազգային արժէքներին, հայրենիքի գերագոյն շահերին, մեր սուրբ նախնեաց եւ հայրենեայց պաշտպան նահատակ զաւակների հաւատին ու նուիրական տեսիլքին, որպէսզի ազգովի ունենանք շնորհն ու գորութիւնը կերտելու մեր պետութեան եւ հայրենական կեանքի զարթօնքը:

Մեր Սուրբ Եկեղեցին բոլոր ժամանակներում առաջնորդել է մեր ժողովրդին հոգու փրկութեան, մտքի լուսաւորութեան, ազգային կեանքի վերելքի, նաեւ օրհնել ազատագրական պայքարները, սատարել պետականութեան վերահաստատման մաքառումներին: Հայաստանեայց Առաքելական Սուրբ Եկեղեցին այս տեսլականով միշտ իր ձայնն է բարձրացնում հայրենիքի համար վտանգաւոր ընթացքների, ազգային ինքնութեան սպառնալիքների, մեր ժողովրդի իրաւունքների ու արժէքների ոտնահարման դէմ: Հաւատարիմ իր կոչմանը՝ մեր Սուրբ Եկեղեցին պիտի շարունակի տերունապատուէր իր առաքելութիւնը՝ գորակից ու օգտակար լինելով հայրենաշէն ու ազգաշահ բոլոր ջանքերին՝ ի սեր մեր ժողովրդի եւ պետութեան:

Աղօթում ենք, որ Աստուած իմաստութիւն պարգեւի եւ աջակից լինի ձեզ ձեր գործունէութեան մէջ, որպէսզի Ազգային ժողովի առաքելութիւնը արգասաւորութիւն ցանկալի արդիւնքներով՝ յանուն հայրենիքի առաջընթացի, մեր ժողովրդի խաղաղ, ապահով ու արժանապատիւ կեանքի: Բարի եւ օրհնեալ ընթացք Ազգային ժողովի 8-րդ գումարման աշխատանքներին:

## ԵՐԿՈՒ ԱԲԵՂԱՆԵՐ ԿԱՐԳԱԼՈՅԾ ԿՐ ՀՈՉԱԿՈՒԻՆ

Վեհափառ Հօր տնօրինութեամբ կարգալոյծ հռչակուած են  
Տէր Գեղարդ արեղայ Յովհաննիսեանը – աւագանի անունով Գագիկ եւ  
Տէր Պետրոս արեղայ Ազարեանը – աւագանի անունով Նորայր  
Երկու արեղաները կը դասուին աշխարհականներու  
կարգին իրենց աւագանի անուններով:

## ՆՈՐ ՆՇԱՆԱԿՈՒՄՆԵՐ

Վեհափառ Հայրապետը կատարած է նոր նշանակումներ:  
Հոգեշնորհ Ս. Մեսրոպ վարդապետ Պարսամեանը, ազատուելով Գէորգեան հոգեւոր ճեմարանի տեսուչի պաշտօնէն, Օգոստոս 15-էն ծառայութեան կոչուած է ԱՄՆ Արեւելեան հայոց թեմ:  
Տեսուչի պաշտօնը տրուած է Հոգեշնորհ Ս. Շահէ ծայրագոյն վարդապետ Անանեանին:





ԱՐԱՆԴԱԿԱՆ ՈՒՂՂԱԳՐՈՒԹԵԱՄԲ

**ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱՇՆԻ ԴԻԻԱՆԱՊԵՏԸ  
ՀԻՐԸՆԿԱԼԵՑ «ՀԱՅԿԵԱՆ» ՄՐՑԱՆԱԿԱԲԱՇԽՈՒԹԵԱՆ  
ՅԱՂԹՈՂ ՀԱՅՈՐԴԻՆԵՐԸ**

Օգոստոսի 9-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի դիանապետ Գերաշնորհ Ս. Արշակ եպիսկոպոս Խաչատրեանը Մայր Աթոռ Ս. Էջմիածնի «Վաչէ եւ Թամար Մանուկեան» Մատենադարանին մէջ հիւրընկալեց «Armenia First» նախաձեռնութեան եւ «Help Foundation» հիմնադրամի կողմից համատեղ կազմակերպուած «Հայկեան» մրցանակաբաշխութեան յաղթող հայորդիները, որոնք 44-օրեայ արցախեան պատերազմի ընթացքին եւ աղկէ յետոյ իրենց աջակցութիւնը բերին Արցախին ու Հայաստանին:



Դիանապետ Սրբազան Հայրը իր երախտագիտութիւնը յայտնեց հիմնադրամներու ներկայացուցիչներուն եւ «Հայկեան» մրցանակակիներուն՝ տարբեր ժամանակաշրջաններու մէջ, յատկապէս 44-օրեայ Արցախեան վերջին պատերազմի ընթացքին, Հայաստանին եւ Արցախին տարբեր մարզերու մէջ աջակցութիւն ցուցաբերելուն համար:

Ան չափազանց կարեւոր համարեց հոգեւոր միասնական արժէքներու՝ մասնաւորաբար Հայ Եկեղեցւոյ շուրջ հայութեան համախմբուածութեան անհրաժեշտութիւնը:

**ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ ՆՇՈՒԵՑԱԻ ՍՈՒՐԲ ԱՍՏՈՒԱԾԱՇՆԻ ՎԵՐԱՓՈԽՄԱՆ ՏՕՆԸ**



Օգոստոսի 15-ին Տօնը նշուեցաւ Սուրբ Գայանէ վանքին մէջ: Պատարագիչն էր Հայաստանի Աստուածաշնչային ընկերութեան գլխաւոր քարտուղար Գերաշնորհ Ս. Եզնիկ արքեպիսկոպոս Պետրոսեանը:

Սրբազան Հայրը, իր քարոզին մէջ անդրադառնալով տօնի խորհուրդին, մասնաւորապէս նշեց. «Երկու հազար տարի առաջ Աստուածամայրը մեզ չլքեց եւ չզնաց, այլ կ'ապրի մեր մէջ, կ'ապրի բոլոր մայրերուն մէջ, եւ մենք անցեալով չենք խօսիր Աստուածամոր մաս ին, որովհետեւ ան այսօր մեզ հետ է»:

Եզնիկ Սրբազանը, յատուկ անդրադարձ կատարեց որդեկորոյս մայրերուն՝ անոնց կրած ծանրագոյն ցաւերն ու վիշտերը համեմատելով Աստուածամոր տառապանքներուն հետ. «Աստուածամոր նման բազմաթիւ մայրեր կան այսօր Հայաստանի մէջ, որոնք զաւակներ կորսնցուցին, որոնք ունին նոյն մայրական ցաւը, ինչպիսին Աստուածամայրն ունէր, եւ որոնց համար Աստուածամայրն օրինակ է, դիմագրաւելու այն ցաւերը, որոնք այսօր ունեն իրենց հոգիներուն եւ սրտերուն մէջ:

Յաւարտ Սուրբ Պատարագի, հանդիսապետութեամբ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Լուսարարապետ Գերաշնորհ Տ. Մուշեղ եպիսկոպոս Բաբայեանի, Սուրբ Տրդատի բաց խորանին կատարուեցաւ Խաղողօրհնէքի արարողութիւնը:

### ՄԱՅՐ ԱԹՐՈՒ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ՄԷՋ ԿԱՏԱՐՈՒԹՅԱԻ ԿՐԹՈՒԹԵԱՆ ՄՇԱԿՆԵՐՈՒ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԿԱՐԳ

Օգոստոս 30-ին, 2021-2022 թթ. ուսումնական նոր տարեշրջանին ընդառաջ, Մայր Աթոռի Սուրբ Տրդատ բաց խորանին, նախագահութեամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսին, տեղի ունեցաւ



կրթութեան մշակներու օրհնութեան աւանդական կարգը, կազմակերպութեամբ Քրիստոնէական Դաստիարակութեան Կենտրոնի կողմէ: Ներկայ էին ՀՀ կրթութեան տեսչական մարմնի ղեկավար տիար Ալեքսանդր Շագաֆեանը, մարզային կրթութեան վարչութիւններու ղեկավարներ, բարձրագոյն ուսումնական հաստատութիւններու տնօրէններ, ՀՀ Ձուռազմակրթական համալսարաններու պետեր, Երեւանի եւ մարզերու հանրակրթական դպրոցներու տնօրէններ եւ բազմաթիւ մանկավարժներ: Օրհնութեան կարգի աւարտին Վեհափառ իր հայրապետական օրհնութիւնն ու գնահատանքը փոխանցեց կրթութեան ոլորտի երախտաւորներուն:

### ՎԵՀԱՓԱՌ ՀՕՐ ԱՐՏԱՍԱՆԱԾ ԽՕՍՔԸ Կը ներկայացնենք յայտաւումներով (Խմբ.)

*Ուրախ ենք վերստին ողջունելու ձեզ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում: Մենք մեծապէս կարեւորում ենք, որ կրթութեան գործին նուիրուած մշակներդ նոր ուսումնական տարուայ մեկնարկին, ուխտաւորաբար այցելում էք Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, որպէսզի Աստուծոյ օրհնութեամբ սկսեք ձեր շնորհրդակալ առաքելութիւնը:*

*Մեծ պատասխանատուութիւն եւ մեծ պատիւ է մանկավարժ լինելը, քանզի իւրաքանչիւր ազգի յուսալի սպազան պայմանաւորում են ուսումը,*

*կրթութիւնն ու դաստիարակութիւնը: Գլոբալիզացիայի համահարթեցնող ընթացքների եւ օրէցօր նորացող գիտական ձեռքբերումների յանդիման՝ այսօր արդիական գիտելիքի ուսուցմանը հաւասարազօր կարեւորում է հոգեւոր նկարագրի ու ներաշխարհի ձեւաւորումը:*

*Միւրելիներ, մեր հայրենիքի կեանքում տեղ գտած վերջին զարգացումները, արցախեան պատերազմը, հայրենիքի ներկայիս ծանր ու անկայուն վիճակը վկայում են, թէ որքան մեծ տեղ պէտք է տրուի կրթութեանը եւ մրցունակ գիտելիքին մեր կեանքում: Մեր կրած փորձութիւնը եւ շարունակուող դժուարութիւնները առաւել շեշտադրում են նաեւ ճշմարիտ արժէքներով կերտուած աշխարհայեացքի, վեհ իդէալների ու ձգտումների կարեւորութիւնն ու պահանջը, որոնք նախ եւ առաջ սերմանում, աճում ու զարգանում են կրթօջախներում եւ ընտանիքում: Այսօր, հայրենիքի անվտանգութիւնն ու ապահովութիւնը պէտք է խարսխուած լինեն մեր երիտասարդների ձեռք բերած գիտելիքների, ինքնաձանաչողութեան, հայրենասիրութեան ու ազգասիրութեան վրայ:*



Մեր խնդիրը այսպես կոչուած՝ աշխարհաքաղաքացի պատրաստելը չէ, այլ հայրենասէր, բարոյական բարձր յատկանիշներով օժտուած, ազգային դիմագիծ ունեցող, ուսեալ, բարեկիրթ անձ եւ նախանձախնդիր քաղաքացի: Այս առումով կարելորում ենք ամբողջական ծրագրով «Հայ Եկեղեցու պատմութեան» պարտադիր դասաւանդումը դպրոցում: Այսօր իւրաքանչիւրս մեր տեղում պէտք է հոգ տանենք, որպէսզի կրթութեան ոլորտում նախաձեռնուած բարեփոխումները, որոնց շուրջ առիթ ունեցել ենք արտայայտուելու, չվնասեն, այլ իրապէս օգտակարութիւն ունենան մեր մատաղ սերնդի կրթութեան գործում: Այս ամէնում կարելոր է ձեր նախանձախնդրութիւնը՝ ապահովագրելու մեր մանուկներին եւ պատանիներին անցանկալի երեւոյթներից ու մոլորութիւններից, զօրացնելու նրանց հոգում ազգային ինքնագիտակցութեան ոգին եւ այն համոզումը, որ գիտելիքը լոյս է եւ աղբիւր բարիքների:

Կրթութեան մշակներիդ օրհնութեան այս նուիրական օրը առանձնայատուկ ցանկանում ենք արձանագրել, որ հայրենեաց սահմանների պաշտպանութեան ծառայութեան մէջ այսօր դրսեւորուող ոգին պտուղն ու արգասիքն են նաեւ ձեր ներդրած ջանքերի: Միրելիներ, առաջնորդուէք եւ առաջնորդէք ձեր սաներին առ Աստուած՝ հաւատքով ու ապաւինութեամբ, եւ կենսունակ պիտի լինեն ձեր սերմանած արժէքները ու մեր ժողովուրդը պիտի պահպանի վերելքի ներուժը՝ սաղմոսերգուի խօսքի համաձայն, որ պատգամում է «պահիր Տիրոջ ճանապարհները եւ Նա կը բարձրացնի քեզ երկիրը ժառանգելու» (Մղմ. Լ, 34):

Մեր Եկեղեցին, ինչպէս բոլոր ժամանակներում, շարունակելու է աջակցել մեր երկրում կրթութեան ու գիտութեան զարգացմանը: Շարունակելու ենք համագործակցել նախարարութեան եւ կրթօջախների հետ՝ ապագայի բարի յոյսերով ու հաւատով:

Առ Աստուած աղօթքով հայցում ենք, որ Երկնաւոր Տէրը օրհնի մանկավարժներիդ աշխատանքը բարի արգասիքներով եւ բազմապատկի ձեր ուժն ու եռանդը եւ բարի վաստակը մեր հայրենիքի եւ ժողովրդի կեանքում:



## Փոխան Խմբագրականի

Ուրախությունն ունինք յայտնելու որ վարը նշուած գրութիւնը, Աստուածատր Վերափոխման տօնին օրը՝ 15 Օգոստոս 2021-ին, կարդացուեցաւ Հայ Եկեղեցւոյ Չայն ըստիօհաղորդման ընթացքին: Չայն հեղինակած է Ըստիօժամի տնօրէնուհի եւ հաղորդավարուհի Տիկին

Մարինա Աւագեան-Չափրագեանը: Խմբագրութեանս դիմումին ընդառաջելով Տիկին Չափրագեան զայն սիրայօժար տրամադրեց հրատարակելու համար Փարոսի այս թիւին մէջ: Իր բովանդակութեան հարստութեան համար զայն կը հրատարակենք «Փոխան Խմբագրականի» եւ հեղինակին կը յայտնենք մեր շնորհակալութիւնը:

Փարոսի Խմբագրութիւն

## Վերափոխումն Սուրբ Աստուածածնի

Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցին մեծ շուքով և հանդիսաւորութեամբ է նշում Ս. Աստուածածնի Վերափոխման տօնը: Ան Հայ Եկեղեցու հինգ տաղաւար տօներից չորրորդն է և Տիրամօրը նուիրուած տօներից՝ ամենահինը:

Քրիստոնէայ սուրբերի շարքում ամենից պաշտուող կերպարներից է «Ամենասուրբ Կոյս», «Սիօնի դուստր», «Երուսաղէմի դուստր», «Իսրայէլի կոյս», «Մարիամ Աստուածածին» «Աստուածամայր», «Տիրամայր», «Կոյս Մարիամ»...

«Շատ դուստրեր հարստութիւն ձեռք բերին, շատերն էլ սխրագործութիւններ կատարեցին, բայց դու գերազանցեցիր նրանց և անցար բոլորից: Քո մէջ կանացի կեղծ բարեհաճութիւն չկայ և ոչ էլ սին գեղեցկութիւն»:

Ո՞վ է նա: Եկէք իրար հետ անցնենք նրա անցած ճանապարհը:

Սուրբ Մարիամը դուստրն է Յովակիմի և Աննայի: Հօր կողմից նա սերում էր թագաւորական ցեղից՝ Դաւթի ազգից, իսկ մօր կողմից՝ Ղևիի քահանայական ցեղից:

Քանի՞ տարեկան էր Սուրբ Մարիամ Աստուածածինը իր և Քրիստոսի կեանքի գլխաւոր հանգրուաններին:

Մարիամը եօթ ամսական է ծնուել, , եօթ տարեկանից սկսեց ապրել տաճարում: Մարիամը 3 տարեկան էր, երբ ծնողների կողմից ընծայուեց տաճարին՝ քանի որ այդ էր եղել տարիներ շարունակ զաւակներ չունեցող նրա ծնողների ուխտը առ Աստուած: Մարիամն իր առաքինի վարքով մնաց տաճարում եօթը տարի և ամէն օր հոգիով կրթուում էր պարկեշտութեան մէջ: Երբ լրացաւ Մարիամի տասնչորս տարին, քահանայապետը նրան հրամայեց ամուսնանալ, ինչպէս միւս կոյսերին, սակայն նա չհամաձայնեց ասելով, որ իր ծնողներն իրեն նուիրել են տաճարին, և ինքն Աստծուն ուխտել է կոյս մնալ:

Քահանաները դիմեցին Աստծուն, որ Նա Ինքը ցոյց տայ Քահանայապետին: Եւ երկնքից մի ձայն ասաց. «Հաւաքի՛ր Իսրայէլի բարեպաշտ որդիների զաւագանները և դրանք դիր խորանում և ում զաւագանը որ կը ծաղկի, նրան էլ տուր այս կոյսին»: Այդ ժամանակ քահանայապետը հաւաքեց զաւագանները և դրանք դրեց խորանում: Մի որոշ ժամանակ անց Յովակիմի զաւագանը ծաղկեց, և Հոգու շնորհը երևաց նրա վրա: Այն օրերին, Յովակիմը քառասունմէկ տարեկան էր: Սակայն, քանի որ Յովակիմը յանձն չէր առնում ընդունել Մարիամին, քահանաները նրան ասացին. «Ո՞վ մարդ, Աստծուն մի՛ հակառակիր»: Յովակիմը նախկինում ամուսնական պարկեշտ կեանքով էր ապրել, բայց երկար ժամանակից ի վեր ամուրի էր: Նա



իր առաջին ամուսնությունից չորս որդի և երեք դուստր ունեւ: Մարիամը 14 տարեկանում յանձնուեց խնամակալութեան 41 տարեկան Յովսէփին: Յովսէփը Մարիամին տարաւ Նազարէթ և բնակեցրեց իր զաւակների հետ, իսկ երեք ամիս անց Գաբրիէլը Քրիստոսի ծննդեան աւետիսը տուեց: «Օրինեալ ես դու կանանց մէջ»:

15 տարեկան էր Մարիամը, երբ Քրիստոս ծնուեց: Քրիստոսի կեանքի 31-րդ տարում Յովսէփը վախճանուեց 72 տարեկանում:

Տէրունական խաչելութեան, Յարութեան և Համբարձման ժամանակ, երբ Քրիստոս 33 տարեկան էր, Մարիամը 48 տարեկան էր: Աւանդութեան համաձայն՝ Ս. Կոյսը Յիսուս Քրիստոսի խաչելութիւնից յետոյ, շուրջ 12 տարի ապրում է Երուսաղէմում՝ Ս. Յովհաննէս Աւետարանչի խնամատարութեան ներքոյ: Եւ մի օր Գաբրիէլ հրեշտակապետից ստանում է երկրից երկինք վերափոխման աւետիսը. «Ուրախացի՛ր, բերկրեալդ կանանց մէջ, քանզի քեզ կանչում է մեր Արարիչը, քո Միածին Որդին»: Սուրբ Աստուածածինն այս բարի լուրը յայտնում է իր ազգականներին, բոլոր քրիստոնէաներին և առաքեալներին՝ պատուիրելով իրեն թաղել Գեթսեմանիի ձորակում: Ապա Սուրբ Կոյսը Ս. Յովհաննէսին խնդրում է մատուցել աստուածային Պատարագ, որպէսզի հաղորդուի իր Միածին Որդու Մարմնին ու Արեանը: Նրա երկրային կեանքի տարիների ընդհանուր թիւը 60 է: Երբ Ս. Կոյսը ննջում է, նրա հոգին ելնում ու խառնուում է լուսեղէն զօրքին, իսկ մահձում մնացած մարմինը չի այլակերպուում, այլ նրանից Սուրբ Հոգու շնորհն է բուրում անուշահոտ խնկի պէս: Երանելի սուրբ առաքեալներն իրենց ուսերի վրայ են վերցնում Աստուածամօր սուրբ նշխարները և ջահերով, մումերով, սաղմոսերգութեամբ ու օրհնութեամբ առաջնորդուում դէպի Գեթսեմանի: Ապա մեր Տէրը լուսափայլ ամպով ու հրեշտակներով մօտենում է Ս. Կոյսի գերեզմանին և կնքուած գերեզմանից, առանց կնիքը խախտելու, վերցնում է աստուածընկալ մարմինն ու վերանում երկինք:

Տիրամօր օրինակելի և առաքինի կեանքը լաւագոյն օրինակն է կանանց համար:

Եկէ՛ք խնդրենք Մարիամին, որ մեր սրտերը հեզ և խոնարհ դարձնի, ինչպէս Իր Որդու սիրտը:

Եկէ՛ք խնդրենք Մարիամին, որ սովորեցնի մեզ լինել այնպէս խաղաղ, բարի ու խոնարհ, ինչպէս ինքն էր: Մենք պէտք է դառնանք աւելի ու աւելի խոնարհ, ինչպէս Մարիամը, և սուրբ՝ ինչպէս Յիսուս: Միայն եթէ մենք խոնարհ լինենք ինչպէս Մարիամը, կը կարողանանք դառնալ սուրբ, ինչպէս Յիսուս, մենք պէտք է խնդրենք Կոյս Մարիամին. «Ամենասու՛րբ Աստուածածին, սովորեցրո՛ւ ինձ սիրել, համբերել»:

Միրելինէ՛ր, աղօթեցէք, Սուրբ Աստուածածնի բարեխօսութեամբ «եկեղեցու» վերածելու ձեր օջախը. եկեղեցին այն տեղն է, ուր շնչում է սրբութիւնը, ուր ապրում է սէրը, ուր տիրապետում է միասնութիւնը, թնաձում խաղաղութիւնը, ուր Աստուծոյ ներկայութիւնը միշտ ու միշտ կայ...»:

### Մարինա Աւագեան - Չափրագեան



**Օգոստոս 15-ի երեկոյեան Սուրբ Յարութիւն Եկեղեցոյ Տէյսպուրեան էջէն հեռասփռուեցաւ Կիրակնօրեայ Վարժարանի աշակերտութեան պատրաստած անցանց, Աստուածամօր նուիրուած հոգեթով յայտագիրը: Այս յայտագրին մտայղացողն ու անոր գործադրութեան տնօրինողն է Տիկին Մարիանա Պօղոսեանը: Փոխան հարցազրոյցի, Փարոսի խմբագրութեան խնդրանքին ընդառաջեց Տիկին Պօղոսեանը եւ մեր ընթերցողներուն սեփականութիւնը դարձուց, յայտագրի ծնունդէն մինչեւ հեռասփռում, իր վկայութիւնը, զոր կը հրապարակենք այնպէս ինչպէս ստացած ենք: Հիացած այս միջոցառումէն, Խմբագր-**

**գրությունս կու գայ շնորհատրելու մեր Կիրակնօրեայ վարժարանի աշակերտները, ուսուցչուհիները, տնօրենուհի Երեցկին Յասմիկ Համբարձումեանը, Տիկին Մարինա Աւագեան-Չափրագեանը, Տէր Աւետիս Քահանայ Համբարձումեանը, Սրբազան Հայրը, բայց մանաւանդ Տիկին Մարիանան, որ կարողացաւ բոլոր «խճաքարերը» քով քովի բերել եւ մոզայիքեան գեղեցկութեամբ ու ներդաշնակութեամբ հանդէս գալ նշուած միջոցառումով:**

**Մի քանի բառով ստորեւ կը ներկայացնենք Տիկին Մարիանայի հակիրճ կենսագրականը: Ծանօթացէ՛ք:**

Մարիանա Պօղոսեան ծնած է Երեւան: Փաստաբանութեան եւ Քաղաքական գիտութեանց վկայականը ստանալէ ետք ան իր մագիստրոսական վկայականը ստացած է Նիսի (Ֆրանսա) Institut Européen des Hautes Etudes Internationales-էն: 2013-ին, Գերմանիոյ մէջ, լոյս տեսած է իր ակադեմական մենագրութիւնը՝ «Happiness vs GDP» խորագրին տակ:

Դեռ մանուկ հասակէն Մարիանան հակում ունեցած է արուեստին՝ երգ, պար եւ ստեղծագործութիւն:

2006-ին ան առաջին մրցանակակիրն էր Նարեկացի Երիտասարդ Երգահաններու Մրցանակին, դաշնամուրի յանկարծագործութեան (Improvisation) մէջ: 12 տարի ան երգած է Մաւետիո Տիգրան Հէքէքեանի Հայաստանի Փոքրիկ Երգիչներ երգչախումբին մէջ, ուր մօտէն ծանօթացած է Հայ հոգեւոր, աշխարհիկ եւ ժամանակակից արուեստին: Երգչախումբը ելոյթներ ունեցած է աշխարհի շատ մը երկիրներու մէջ:

2009-ին ընդունուած է Նիսի Շրջանային Երաժշտանոց, ձայնամարզութեան երրորդ տարի:

Պարարուեստի մէջ, 2008-ին, Մարիանա շահած է Առաջին Հայկական Պարի Օլիմպիատայի առաջին մրցանակը, որուն եղանակն ու պարային ստեղծագործութիւնը ինք կատարած է: Իր երազը եղած է դառնալ Պալէի պարուհի: 2009-ին իր երազը իրականացած է եւ ընդունուած է Հայաստանի Ազգային Օփերայի եւ Պալէի Ակադեմական Թատրոն որպէս պարուհի եւ դերասանուհի: 8 տարիներու ընթացքին ան զանազան դերեր ստանձնած է Բոմբօ եւ Ճուլիէթ Պալէի, Քարմէն եւ Սայաթ Նովա Օփերաներու մէջ:

2014-2017 ուսուցանած է Երեւանի Էսթէթիկայի Կեդրոնին (Փոքր Թատրոն) մէջ: Լոնտոնի մէջ հաշմանդամներու պարուսուցումի վկայականին տիրանալէ ետք, վերադառնալով Երեւան, հիմնած է հաշմանդամներու պարի առաջին ընկերակցութիւնը:

Այժմ Մարիանա կը բնակի Սիտնիի մէջ իր ամուսնոյն եւ դստեր հետ: Ան Նայիրի Հայկական Պարախումբի գեղարուեստական Տնօրէնն է: Մարիանան նաեւ Սուրբ Յարութիւն Եկեղեցոյ Կիրակնօրեայ Վարժարանին երգչախումբին երգի ուսուցչուհին է:

## **ՍՈՒՐԲ ԱՍՏՈՒԱԾԱՍՕՐ ՎԵՐԱՓՈՒՄԱՆ ՏՕՒՆ**

### **ՆՈՒՒՐՈՒԱԾ ԱՌՑԱՆՑ ՄԻՋՈՑԱՌՈՒՄԸ**

Միջոցառման գաղափարը ծագել էր ամիսներ առաջ, երբ մեծ ցանկութիւն կար մեկնարկելու համերգային հանդիպումների շարք՝ Սիդնեյի Հայ Առաքելական Սուրբ Յարութիւն Եկեղեցու գմբէթի ներքոյ: Սակայն ներկայիս COVID-19 համաճարակի հետ կապուած նոր իրականութիւնը, ստիպեց բոլորիս ուրուագծել առաջ ընթանալու նոր քարտեզագրութիւն:

Ընդհանրապէս, Աստուածամօր կերպարը, Հայ քրիստոնէական պատմութեան համայնապատկերում հանդիսանում է կարևորագոյն հիմնասիւններից մէկը, իր հաւաքական՝ կատարեալ կնոջ և մօր խորհուրդով՝ Յիսուսի հրաշափառ ծննդեան աւետման, խաչման և համբարձման, ինչպէս նաև Տիրամօր՝ երկրից երկինք տեղափոխուելու աւետիսի սրբագործմամբ:

Ուստի, գտայ որ յատկանշական կը լինի այս տօնին պատշաճ կերպով անդրադառնալը՝ մշակութային մի գեղեցիկ նախաձեռնութեամբ:

Քանի որ Եկեղեցուն կից՝ Կիրակնօրեայ Վարժարանի սաների հետ, արդեն իսկ սկսել էինք պատրաստել Շարլ Ազնաուրի «Աւէ Մարիա» ստեղծագործութեան հայկական տարբերակի սերտումը, որի բառերը յանձն էի առել թարգմանել՝ վերանուանելով, «Սուրբ Տիրամայր մեր», ուստի որոշեցինք զօրաշարժի ենթարկել մեր ողջ ներուժը և կազմակերպել ծաւալով աւելի սեղմ, սակայն այնուամենայնիւ՝ հոգևոր անփոխարինելի լիցքեր հաղորդող առցանց հանդիպում:

Արժանանալով՝ Աւստրալիայի և Նոր Զելանտայի Հայոց Թեմի Առաջնորդ, Բարձրաշնորհ Տ. Հայկազուն Արքեպիսկոպոս Նաճարեանի օրհնանքին և անփոխարինելի հովանաւորութեանը՝ լծուեցինք գործի: Առաջ ընկնելով ասեմ, որ հենց Սրբազան Հօր կենսանորոգ և աներևակայելի զօրեղ ուղերձով էլ ազդարարուեց մեր միջոցառման յայտագիրը:


Զարկը տրուած էր: Գիւղ կանգնի՝ գերան կը կոտրի:

Այս՝ թեպետև փոքրիկ, սակայն աշխատատար նախաձեռնութիւնը, կեանքի պէտք է կոչուեր, հաշուած օրերի ընթացքում՝ միմիայն համատեղ և համախոհ անհատների մասնակցութեամբ:



Միանշանակ՝ Վարժարանի տնօրէնուհի և անվերապահ նուիրեալ՝ երեցկին Յասմիկ Համբարձումեանի քաջալերանքով, ուղղորդմամբ և կազմակերպչական բացառիկ ջիղի ցուցաբերմամբ՝ սկսեցինք իրագործել փափաքուածն ու ծրագրուածը: Իր ներդրած սերը և աւանդը՝ Վարժարանի սաների հայեցի և քրիստոնէական դաստիարակչութեան մէջ՝ պարզապէս անգերազանցելի է:

Իհարկէ առանց Տէր Աւետիսի բարեշնորհ մասնակցութեան, դժուար է պատկերացնել որևէ նախագծի անկաշկանդ յաջողութիւն, ուստի և այս մէկը՝ բացառութիւն չէր: Իր Պահպանիչ Աղօթքի զօրութիւնը մեզ ուղեկցում էր նախապատրաստական աշխատանքների ընթացքում և գետեղուեց նաև՝ միջոցառման տեսագրութեան մէջ: Աւելին, տեսագրութեան ամբողջ մոնտաժային աշխատանքը իրականացրեց իր հարազատ քոյրը՝ Աննան, որն ի դէպ գտնուում էր՝ ոչ աւել, ոչ պակաս՝ Երևանում և առանց նրա, մեր ամբողջ ջանքերն ու երևակայութիւնը՝ կը մնային անարդիւնք :



Եւ մասնակիցների՝ վերջին պատուաւոր հորիզանականում են, անկասկած՝ մեր գլխաւոր հերոսները, մեր հրաշք բալիկները, որոնք իրենց ճշմարիտ լոյսով և յոյսով, խաղաղեցրին մեր այս ոչ դիւրին ժամանակներում ալեկոծուող սրտերը:

Նախ և առաջ, հարկ է նշել, որ նրանք պատուով յաղթահարեցին մի շարք փորձություններ:

Իրենց համար բոլորովին նոր փորձառություն էր, սովորել երգն անցանց և ձայնագրել այն՝ տեսալսողական (audio and video) տարբերակներով: Նաև կատարել ստեղծագործությունը սոլո տարբերակով՝ քանի որ Կիրակնօրեայ Վարժարանի փորձերի ընթացքում, մենք միշտ երգել ենք բազմաձայն: Երևան եկան մի շարք շնորհաշատ երեխաներ՝ բացայայտելով իրենց տաղանդը, թե հենց իրենց և թե՛ ծնողների, իմ և ունկնդրի համար: Չեմ կարող չնշել՝ ծնողների ներգրաւուածութեան, աջակցութեան և հետևողական մասնակցութեան կարևորութիւնը՝ երեխաներին սատարելու և քաջալերելու տեսանկիւնից: Աւելին՝ գտնում եմ, որ ծնողի դերակատարութիւնը երեխայի աշխարհընկալման, մտահորիզոնի և լայնախոհութեան առումով՝ շարունակում է մնալ բախտորոշ:

Ի դէպ նշեմ, որ էլոյթ ունեցող Վարժարանի սաների տարիքը կը տարուբերի 4էն 14: Ծրագրում ներառուած էին Աստուածաշնչեան հոգևոր ընթերցումներ, սաղմոսներ, Սուրբ Պատարագի բացման՝ Խաչատուր Տարօնացու, «Խորհուրդ խորին» շարականը: Նշեմ նաև, որ Ազնաւուրի «Սուրբ Տիրամայր» ստեղծագործութեան ժամանակ, մտածեցի որ շատ պատկերաւոր և տպաւորիչ կը լինի, եթէ երեխաները ներկայացնեն նաև իրենց նկարչական տաղանդը, որը նրանք կատարելագործում են՝ Վարժարանի դասընթացքների ժամանակ, մեր սիրելի արուեստի ուսուցչուհի՝ Վանա Գալայճեանի գլխաւորութեամբ: Երգի ընթացքում, կարծես երկնքի խորքից, յայտնուում էին Տիրամօր պատկերի տարբեր մեկնաբանութիւններ, սկիզբ առած՝ մեր չքնաղ բալիկների, անյատակ երևակայութեան ակունքներից:

Միջոցառմանը, իր անչափ հմայիչ և իմաստալից մասնակցութիւնն ունեցաւ նաև՝ «Եկեղեցու ձայն» ռադիոժամի պատասխանատու, Սիդնեյի Հայ Համայնքի Բարեկեցութեան Կեդրոնի անբաժան մաս կազմող՝ Մարինա Աւագեան - Չափրագեանը, որ համապարփակ կերպով ներկայացրեց Աստուածամօր կերպարի բուն էութեան մանրամասները, համեմելով իր խօսքը սեփական, հոգեթով, բանաստեղծական պատումով:

Ես նոյնպէս հանդէս եկայ փոքրիկ կատարումներով՝ ընթերցելով Տիրամօրը նուիրուած հատուած՝ Նարեկացու «Մատեան Ողբերգութեան» գրքից և կատարելով՝ Ֆրանց Շուբերտի «Աւէ Մարիան»:

Ամփոփելով խօսքս, ասեմ որ չնայած տեխնիկական որոշ թերութիւնների՝ համարում եմ այս համատեղ ձեռնարկը յաջողուած և իմ խորին երախտագիտութիւնն եմ յայտնում բոլոր մասնակիցներին, իրենց լիակատար նուիրման համար, ևս մէկ անգամ փաստելով իրողութիւնն առ այն, որ միասնական լոյսով՝ իսկապէս անպարտելի ենք:

[<https://www.youtube.com/watch?v=bUpAkZDvS4U> կամ Սուրբ Յարութիւն Եկեղեցւոյ YouTube-ով, եկեղեցւոյ կայքէջին միջոցաւ՝ [www.armenianchurchsydney.org.au](http://www.armenianchurchsydney.org.au) News & Events – Youtube Sermons & Services]



## Ծիսական Լուրեր

## Օրլանտ Նոր Զելանտա

Թեմական Խորհուրդը իր Յուլիս 27-ի նիստին վաերացուց Նոր Զելանտայի Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցոյ կանոնագրութիւնը, որուն պատրաստութեան եւ ամբողջացման մէջ մեծ դերակատարութիւն ունեցաւ Պրն Ստեփան Գրգեաշարեան, որուն մասնաւորապէս, իսկ Բարձրաշնորհ Սրբազան հօր եւ Թեմական Խորհուրդին ընդհանրապէս՝ Խնամակալ մարմինը կը յայտնէ իր շնորհակալութիւնն ու երախտագիտութիւնը: Առ այդ, Երկուշաբթի 9 Օգոստոսին, իննամակալ մարմինը գումարեց ժողով մասնակցութեամբ ՆԶ-ի մէջ Թեմականի պատույ ներկայացուցիչ Պրն Նշան Պասմաճեանին: Ժողովը որոշեց պատրաստել եկեղեցին արձանագրելու դիմումագիրը ամենէն արագ ժամանակամիջոցին եւ զայն ներկայացնել պետական մարմիններուն: Ժողովը տեղեկացաւ նաեւ Նշան Պասմաճեանի գումարած ժողովին մասին Նոր Զելանտայի Հայկական Միութեան (ՆԶՄ) վարչութեան անդամներ Արեւիկ Ստեփանեան-Ֆորտի, Լիանա Պետրոսեանի եւ Նարինէ Գրիգորեանի հետ, որուն ընթացքին քննարկուած են կարելիութիւնները երիտասարդութեան հոգեւոր կեանքի մասնակցութեան եւ Հայերէնի ուսուցման: Ժողովը որոշած է ծրագիր մը իր վերջնական ձեւին մէջ ունենալ մինչեւ Փետրուար 2022, զայն անցընելէ ետք համայնքի պատասխանատուներուն եւ մասնագէտներու բովէն: Նշան Պասմաճեան նաեւ կապ պիտի հաստատէ այս մարզի մասնագէտներու հետ ի Միտնի: Ժողովը քննարկեց մշակութային աշխատանքներու հետ կապուած հարցեր ինչպէս պարախումբի կազմութիւն, ազգային կարեւոր դէպքերու եւ դէմքերու կամ հաստատութիւններու հիմնադրման ամեակներու առիթով ուսումնասիրութիւններ երիտասարդ հայերու եւ հայուհիներու կողմէ, առցանց դաստիարակչական աշխատանքներ եւ այլն:

**Կիրակի 15 Օգոստոս** – ՆԶՄ-ի հաւաքավայրը լեցուած էր 60-ի շուրջ Հայերէ, որոնք եկած էին տօնելու Աստուածամօր Վերափոխման տօնը: Ղեկավարութեամբ Մարկոս Իսկէնտերեան եւ Նշան Պասմաճեան սարկաւազներուն, տեղի ունեցաւ Անդաստան եւ կարդացուեցաւ Խաղողօրհնէքի վերաբերող Ս. Ներսէս Շնորհալիի հեղինակած աղօթքը: Անդաստանին մասնակցեցան նաեւ Զուարթնոց երգչախումբի դպրոհիները: Մարկոս Սարկաւազ, դաշնամուրի ընկերակցութեամբ Տիկին Նարինէ Գրիգորեանի, մեներգեց «Վարանիմք»ը, տպաւորելով ներկաները: Տիկնանց Յանձնախումբի անդամուհիներն ու հաւատացեալներ խաղող եւ ուտելիքներ բերած էին, որոնք բաշխուեցան ներկաներուն: Մեծ էր ներկաներուն ուրախութիւնը տեսնելով որ չորս երիտասարդ երիտասարդուհիներ, առաջին անգամ ըլլալով, կը մասնակցէին Անդաստանին, որոնք իրենց փափաքը յայտնեցին երգչախումբին եւ այլ աշխատանքներու միանալ հետագային:





## Աւստրալասիական Մերձաւոր Արեւելեան Եկեղեցիներու Խորհուրդին Պատգամը Պսակաձեւ Ժահրի Դէմ Պատուաստուելու Մասին

**«Յոյսով ուրախացէք, տառապանքի մէջ համբերեցէք, աղօթքի մէջ յարատեւեցէք: Սուրբերու կարիքներուն հաղորդակից եղէք. հիւրասիրութեան հետամուտ եղէք: Ուրախացողներուն հետ ուրախացէք ու լացողներուն հետ լացէք: Իրարու հանդէպ միեւնոյն ստածումը ունեցէք (Հռով. 12: 12-16)**

Միրելի Հաւատացեալներ,

Այս դժուար օրերուն, մեզմէ շատեր առանձնացած են իրենց տուներուն մէջ, շատեր կը տառապին Քովիտ 19-ի պատճառով: Մենք, ձեր հոգեւոր հովիւները, յարատեւ կ'աղօթենք ձեզի համար: Կը հասկնանք ձեր յուզումները, ինչպէս նաեւ հոգեբանական եւ նիւթական նեղութիւնները, որոնց մեջէն դուք կ'անցնիք: Պարտադիր փակումներու պատճառով շատեր իրենց գործերը կորսնցուցին, ուրիշներ պէտք է իրենց տուներէն աշխատին եւ ուսանողները դասանդութիւնները կատարեն առցանց: Ասոնք կ'ազդեն մեր կենցաղին վրայ: Տուներու մէջ առանձնացումը մեզ կը տառապեցնէ արգելափակուածի անտանելի զգացումով: Զրկուած ենք նոյնիսկ մեր եկեղեցիներուն մէջ միասնաբար աղօթելու կարելիութենէն: Կը հասկնանք կարգ մը հոգեւորականներու ընդվզումը եւ ցոյցերը այս արգելափակումներուն դէմ, որովհետեւ արգելափակումով չէ որ համավարակի Տէլթա տարբերակը պիտի դադրի տարածուելէն: Մակայն, սիրելիներ, դժբախտաբար նման արարքները մեր հարցերուն լուծում չ'են բերեր:

Միակ միջոցը այս համավարակին դէմ պայքարելու՝ հասանելի պատուաստներով զինուիլն ու ապահովուիլն է: Առ այժմ Ասթրա Չէնէքա պատուաստը մեծ քանակութեամբ մատչելի է, իսկ մինչեւ Սեպտեմբերի աւարտ պետութիւնը Փֆայզըր եւ Մօտերնա պատուաստները աւելի մատչելի պիտի դարձնէ: Համավարակի առաջին օրերէն իսկ, ի բացառեալ կարգ մը հոգեւոր հայրերու, եկեղեցական ղեկավարութիւնը, նկատի առնելով պատուաստին օգտակարութիւնը, քաջալերեց հաւատացեալները ստանալ մատչելի պատուաստը: Պատուաստն ինքնին ամբողջական ապահովութիւն չի տար, սակայն մինչեւ օրս, ան կը մնայ լաւագոյն միջոցը եւ դրական արդիւնքը կը գերակշռէ՝ ժխտականը: Ներկայիս, պետութիւնը պատուաստուիլը պարտադիր չէ դարձուցած, սակայն արդէն իսկ ճամբորդութեան համար՝ պարտադիր է: Նաեւ անոնք, որոնք շինարարութեան գործին մէջ են պէտք է պատուաստուած ըլլան, որպէսզի կարենան ազատ գործել փակման ենթակայ շրջաններուն մէջ: Այս ընթացքը աւելի պիտի շեշտուի Սեպտեմբերի վերջին, երբ մատչելի դառնան պատուաստներու տարբեր տեսակները:

Որպէս եկեղեցապետեր, մենք չենք կրնար պարտադրել պատուաստուիլը այլ կրնանք միայն զայն խրախուսել: Եթէ դուք կը գուրգուրաք ձեր սիրելիներուն եւ այս երկրին վրայ, բարեհաճեցէք ամենակարճ ժամանակի մէջ պատուաստուիլ, ստուգելէ ետք ձեր բժիշկին հետ որ պատուաստը առնելով առողջապահական այլ դժուարութիւններու առաջ չէք գտնուիր: Մենք կը հաւատանք, թէ անմիջապէս որ Աւստրալիոյ բնակչութեան մեծամասնութիւնը պատուաստուած ըլլայ, մենք զմեզ աւելի՝ ապահով պիտի զգանք եւ աստիճանաբար պիտի վերադառնանք մեր «բնականոն» կեանքին: Ի դէպ կը տեղեկացնենք որ եկեղեցապետերու մեծամասնութիւնը պատուաստ ստացած է:

Այս հասարակաց թշնամին յաղթահարելու համար հարկ է ունենալ միասնական դիրքորոշում: Իւրաքանչիւր անհատի գործակցութիւնը անհրաժեշտ է: Մեր ձեռնարկած աշխատանքները պիտի ունենան բազմատեսակ հետեւանքներ: Եկէք զրահաւորուիք Քրիստոսի զրահով, ինչպէս բացատրուած է Պօղոս Առաքեալի Ա Թեսալոնիկեցոց 5: 9-ի մէջ, « **փրկութեան տիրանալու մեր Տէր Յիսուս Քրիստոսի միջոցաւ**»:

Մեր Տէրը ըսաւ « **քաջալերուեցէ՛ք, եւ յաթեցի աշխարհին**» (Յովհ. 16:33): Ուրեմն, եկէք հետեւինք մեր Տիրոջ առանց վախի եւ վարանումի, ինչպէս Սուրբ Պօղոս ըսաւ. « **Եթէ Աստուած մեզի հետ է, ո՞վ մեզի դէմ է**» Հռով 8:31):

## Հարցազրոյց Սուրբ Երրորդութիւն Եկեղեցւոյ Փոխատենապետուհի Տիկին Լալա Կարապետեանի Հետ

**Փարոս (Փ):** Տիկին Լալա, նախ շնորհակալ եմ որ այս հարցազրոյցը ընդունեցիք կատարել Փարոսի հետ: Կը շնորհաւորենք նաեւ ձեր ընտրութիւնը որպէս Սուրբ Երրորդութիւն Եկեղեցւոյ Ծխական Խորհուրդի անդամ եւ ապա՝ փոխատենապետուհի: Կրնայի՞ք դուք ձեզ ներկայացնել մեր ընթերցողներուն, թէեւ ձեզ ճանցողները շատ են մեր համայնքին մէջ:



**Տիկին Լալա (ԼԿ):** Սկսիմ շնորհակալութիւն յայտնելով Փարոս ամսաթերթին եւ ձեզի՝ Պրն Նշան Պասմաճեան, որ առիթը ընծայեցիք ձեզի հետ գրուցելու:

Ես իրաքահայ եմ: 24 տարեկան հասակիս գաղթած եմ Աւստրալիա: Ներկայիս կը զբաղուիմ Promotional Products Printing արհեստով: Մասնակցած եմ ՀՕՄԻ, ՀՄԸՄ եւ Համազգայինի յանձնախումբերու աշխատանքերուն, նաեւ Գօլտսըն Ճեմարանի ծնողաց յանձնախումբին մէջ երկար տարիներ: Ներկայիս, ինչպէս նշեցիք, Ուէնթուրթօվիլի Սուրբ Երրորդութիւն Եկեղեցւոյ Ծխական Խորհուրդի անդամ եմ:

**(Փ):** Ուրախ պիտի ըլլանք եթէ կարենաք ներկայացնել Ծխական Խորհուրդի անդամները իրենց համապատասխան պաշտօններով:

**(ԼԿ):** Ծխական Խորհուրդը կը բաղկանայ հետեւեալ անդամներէն.

- |                    |                                                  |
|--------------------|--------------------------------------------------|
| Մարգար Մկրտիչեան   | - Ատենապետ                                       |
| Լալա Կարապետեան    | - Փոխատենապետ                                    |
| Յարութ Հաճեան      | - Ատենադպիր (Հայերէն)                            |
| Սալբի Փամպուրեան   | - Ատենադպիր (Անգլերէն)                           |
| Կարօ Արապեան       | - Գանձապահ                                       |
| Կարօ Գոյումճեան    | - Փոխգանձապահ                                    |
| Արամայիս Ռոտեսեան  | - Տիկնանց Յանձնախումբին մօտ Լիազօր ներկայացուցիչ |
| Արշալոյս Թահմիզեան | - Խորհրդական                                     |
| Վազգէն Զ Եկէնեան   | - Խորհրդական                                     |

**(Փ):** Ապրիլէն ետք մինչեւ օրս ի՞նչ գործունէութիւն տարաւ ձեր Խորհուրդը իսկ Պսակաձեւ Ժահրը ինչպիսի՞ ազդեցութիւն ունեցաւ ձեր գործունէութեան վրայ:

**(ԼԿ):** Կիրակի 23 Մայիսին նշեցինք Սուրբ Երրորդութիւն Եկեղեցւոյ անուան օր Պաթմանեան սրահէն ներս – ունեցանք օտար հիւրեր՝ Պրն Էտի Սարգիս, Տիկն Զուլիա Ֆին, եւ Եկեղեցւոյ բարերարներու ներկայութեամբ, պատուեցինք մեր Եկեղեցւոյ բարերարները Պրն Ճեմա Տօնադեսեանը, Տէր եւ Տիկն Շագ եւ Ռիթա Ներսեսեանները նաեւ հիմնադիր անդամ Տէր եւ Տիկն Կարապետ եւ Արաքսի Ալաճաճեանները:



Յունիս ամսուն կազմակերպեցինք ընկերային հաւաքոյթ մը՝ «Քեպայի օր»։ Անշուշտ անկէ ետք եկաւ արգելափակումը եւ մեր գործունէութիւնը այլոց նման կանգ առաւ։ Սակայն, առիթը օգտագործեցինք եւ բաւական աշխատանք տարուեցաւ գրասենեակի կազմակերպման հետ առնչուած։ Սպահովուեցան գոյքեր Դպրաց Դասին կարիքներուն համար։ Եկեղեցւոյ մէջ դրուեցան երկու ելեկտրոնային պաստառներ (screens), նաեւ ներածուեցան Աղօթքի եւ այլ հոգեւոր գիրքեր։

Ներկայիս աշխատանք կը տանինք մեր կայքէջին (Website update) ինչպէս նաեւ Տիկնանց Յանձնախումբին ուղեցոյցի բարեփոխումներուն ի նպաստ (Ladies Auxiliary guidelines update)։

Ժահրը շատ ժխտական ազդեցութիւն ունեցաւ ծրագիրները յաջողցնելու մանաւանդ հոգեւոր հովիւին ժամանումին մէջ։ Հոգեւոր հովիւին ժամանումը անորոշ ժամանակով յետաձգուեցաւ։ Ինչպէս զիտէք Հայր Երեմիա Արգարեանի մեկնումէն ետք (2019-ի աւարտ) , եկեղեցին հոգեւոր հովիւ չունի :

**(Փ)։** Հոգեւոր հովիւի բացակայութիւնը ի՞նչ մարզերու մէջ զգալի է։

**(ԼԿ)։** Նախ կու գամ խորին շնորհակալութիւն յայտնելու Սրբազան Հօր, Տէր Աւետիսին, Տէր Պարթեւ եւ Տէր Նորայր Աւագ Քահանայ հայրերուն, որոնք հոգեւոր հովիւի բացակայութեան, հերթականութեամբ, ամէն Կիրակի մեր շրջանը պատարագեցին, ի բացառեալ վերջին մի քանի Կիրակիներէն, ժահրի դէմ պայքարին համար պետական սահմանափակումներուն պատճառով։

Այո, շատ զգալի է Հոգեւոր Հովիւին բացակայութիւնը, մանաւանդ կարգ մը բնագաւառներէ ներս։ Անոնցմէ են Rookwood գերեզմանատան մէջ թաղուած հարազատներու գերեզմաններու օրհնութեան բացակայութիւնը, տնօրհնքները, հիւանդներու եւ տարիքաւորներու այցելութիւնը, զանոնք հաղորդելը, եւ այլն։ Յուսով ենք որ կարելի եղածին չափ շուտ կը ժամանէ մեր Հոգեւոր Հովիւը եւ ամէն ինչ կը մտնէ իր բնական հունին մէջ։

**(Փ)։** Կրնա՞ք գաղափար մը տալ ձեր անդամական վիճակին մասին։ Վիճակագրութիւն ունի՞ք ձեր անդամներուն մասին։

**(ԼԿ)։** Այժմ մանրամասն աշխատանք կը տանինք անդամական ցանկին վերակազմութեան մարզէն ներս։ Կը կատարենք մեր անդամներուն հետ կապի միջոցներու վերանայում եւ ճշտում (Հասցէներ, հեռախօսի թիւեր, ելեկտրոնային հաղորդակցութեան տուեալներ եւ այլն)։ Անդամներուն մեծամասութիւնը թոշակատուներ եւ միջին տարիքի ընտանիքներ են։

**(Փ)։** Ի՞նչ էին վերջին սահմանափակումներէն առաջ եւ ի՞նչ են ձեր ապագայի ծրագիրները, երբ սահմանափակումը վերջ գտնէ եւ կեանքը վերադառնայ իր բնականոն վիճակին։

**(ԼԿ)։** Մեր ծրագիրները հետեւեալքն են ներկայիս.

1. Հոգեւոր Հովիւի ժամանումը
2. Ամսական դրութեամբ կազմակերպել առ նուագն մէկ ընկերային ձեռնարկ
3. Աջակցիլ Կիրակնօրեայ դպրոցին
4. Կազմակերպել կրօնի դասընթացք
5. Տիկնանց Յանձնախումբին օժանդակող ձեռքեր ապահովել
6. Դպրաց Դասի փորձեր կազմակերպել եւ դպիր-դպրուհիներուն թիւը աւելցնել
7. Սարկաւագներու փորձեր կազմակերպել
8. Աջակցիլ երտասարդական Միութեան անդամներուն թիւի յաւելման աշխատանքին
9. Եկեղեցւոյ շէնքին ընդհանուր նորոգումներով զբաղիլ



**(Փ):** Վերջին երեք ամսուան ընթացքին ձեր եկեղեցւոյ երիտասարդական միութեան (ACYA) ատենապետը ամսական յօդուածով մը հանդէս կու գայ Փարոսին մէջ, բան մը որ տեղի չէր ունենար անցեալին եւ մեծ ուրախութիւն կը պատճառէ Փարոսի խմբագրութեան: Ի՞նչ են ձեր եւ երիտասարդութեան յարաբերութեան չափանիշը եւ ի՞նչ միասնական աշխատանք կը տանիք եւ պիտի տանիք հետագային, իրենց, ինչպէս նաեւ Տիկնանց յանձնախումբին հետ:

**(ԼԿ):** Կարդացած եմ ատենապետ Բաֆֆի Մարգարեանի գրութիւնները: Շատ ուրախ եմ որ իրեն պէս զարգացած, ուսեալ եւ շատ աշխուժ երտասարդներու խումբ մը ունինք:

Ծխական Խորհուրդը ջանք չի խնայեր որ այս խումբը աճի եւ ձեռք ձեռքի մեզի հետ աշխատանքներ տանի. երբ խումբին Եկեղեցիէն կամ սրահէն ներս պարտականութիւններ կը տրուին, կը տեսնենք որ անոնք առաւել ուրախութեամբ մասնակից կը դառնան արօրեայ աշխատանքներուն, աւելի՛ն սորվելու իրենց փափաքը կ'աւելնայ: Երիտասարդները ոգի ի բռին կ'աջակցին ծխական խորհուրդին, որը մեզի համար մեծ ուրախութիւն է: Այստեղ կարելոր է շեշտել որ շատ մը բաներ մենք մեր երիտասարդներէն կը սորվինք: Մեր փափաքն է որ մեր երիտասարդական կազմը ծխական խորհուրդին տարած գործունէութեանց ընդհանրապէս մասնակից ըլլայ: Մէկ խօսքով, մենք ուրախ ենք իրենց ներկայութենէն եւ աջակցութենէն: Իրենց կը մաղթենք յարատեւ յաջողութիւն:

**(Փ):** Ձեր մօտ վերջին մէկ տարին կը գործէ նաեւ Հայ Համայնքի Բարեկեցութեան Կեդրոնը: Կրնա՞ք գաղափար տալ անոր գործունէութեան մասին, ներկայ եւ ապա՝ ապագայ:

**(ԼԿ):** Նախ կ'ուզեմ շնորհակալութիւն յայտնել կամաւոր աշխատանք տանողներուն կազմակերպչական թէ՛ այլ մարզերուն մէջ:

Երեցներու ուրբաթօրեայ հաւաքոյթները շատ յաջող կ'ընթանան: Աղօթքէն ետք մարզանքներ, Պինկօ եւ ճաշ: Կը կազմակերպուին դաշտապտոյտներ եւ ընկերային այլ ձեռնարկներ: Շատ լաւ առիթ է մեր երեցներու համախմբման: Բոլոր մասնակիցները կարօտով կը սպասեն այդ ուրբաթօրեայ հաւաքոյթներուն:

Երեքշաբթի օրերը երիտասարդ մայրերու եւ փոքրերու հաւաքոյթի օրերն են: Այս դրութիւնը նոր է: Կը փորձուի թիւը բազմացնել:

Սակայն, ափսոսանքով պիտի ըսեմ որ այժմ, ժահրի պատճառով, ամէն ինչ դադրած է: Կ'աղօթեմ որ սահմանափակումները արագ վերանան եւ մենք վերստին դիմաւորենք մեր մամիկներն ու պապիկները, մեր աննման Հայ մայրերն ու երեխաները:

**(Փ):** Հայ աւելի լայն համայնքին մէջ ի՞նչ աշխատանքներ կը տանիք համայնքը եկեղեցւոյ շուրջ հաւաքելու համար:

**(ԼԿ):** Դժբախտաբար այս կարճ ժամանակամիջոցին եւ ժահրի պատճառով դեռ առիթը չունեցանք լայն համայնքին հետ աշխատանք տանելու: Սակայն, առանց Եկեղեցւոյ Հայ գաղութ չըլլար: Ամուր պահենք մեր Մայր Տաճարը եւ քաջալերուինք ու զօրանանք Պատարագներու ընթացքին մեր ստացած հոգեւոր սնունդով:

**(Փ):** Ի՞նչ պատգամ ունիք մեր ընթերցողներուն:

**(ԼԿ):** Գրիգոր Նարեկացիին իր Մատենան Ողբերգութեան Բան ՀԵ - նուիրուած Եկեղեցիին, հետեւեալը կըսէ – *Եկեղեցին ժողովուրդի Մայրն է: Եկեղեցին այն վայրն է, ուր կը հաւաքուին երկնայինները եւ երկրայինները միաժամանակ Սուրբ Պատարագի ընթացքին:*

Աջակից կենանք, սիրենք եւ օգնենք մեր Եկեղեցիներուն, որոնք, ամենուր, իւրաքանչիւր Հայու փրկութեան եւ գոյատեւման կրուան են:

*Հարցազրոյցը առցանց վարեց Նշան Պատմաճեան*

## DIOCESAN NEWS



**Saturday 7 August** – The Primate His Eminence Archbishop Haigazoun Najarian presided over the online committee meeting of the Armenian Community Welfare Centre (ACWC); the day's agenda focused on the strategic planning of future projects. The recently elected chairperson Mrs Hermine Partamian, a professional in the field with experience in government departments, in collaboration with the committee members, reviewed the proposed ACWC strategic plan, making practical and productive plans. The committee made relevant clarifications to the future prospects of ACWC, to benefit our seniors.

**Monday 9 August** – Archbishop Najarian met with barrister, Mr Emanuel Kerkyasharian, to discuss the results of the study undertaken; the findings were presented at the 30 August meeting of community organisation representatives.

**Friday 13 August** – The Archbishop commenced his inaugural 'Discussions with Archbishop' posts on the Facebook social media platform, encouraging his community to remain courageous and patient, to withstand the challenges during this cruel pandemic. He delivered an eloquently pragmatic message to the Australian-Armenian community and the wider worldwide Armenian audience. These encouraging online pastoral messages by the Primate are of significant value. The Archbishop's intent was to motivate and activate wisdom in the listener during this distressing period. We encourage our readers to follow the below link to view and hear Archbishop's constructive, pastoral messages.



<https://www.facebook.com/ArmenianApostolicChurchofHolyResurrection/videos/377144190450377/> or access the Church YouTube channel from the website [www.armenianchurchsydney.org.au](http://www.armenianchurchsydney.org.au) News & Events – Youtube link)

**Friday 13 August** – Archbishop Najarian took part in the periodic meeting of the Heads of Middle Eastern Orthodox Churches Conference (AMEC). Due to the absence of the Maronite Primate Bishop Antoine-Charbel Tarabay and AMEC president and Melkite Church Primate Bishop Robert Rabbat who participated to their churches' supreme synods in Lebanon as well as the lockdowns, AMEC had not been able to hold its regular meetings for a long time. The members gave Archbishop Haigazoun the task of writing a letter addressed to the Middle Eastern church communities, to encourage united efforts to overcome the challenges of the pandemic, to be vaccinated, to stop the spread, safeguarding the health of local communities, our loved ones, the wider Australian communities, and especially the NSW State populace.




### **Sunday 15 August – Feast of the Assumption Holy Mass**

On the blessed Feast of the Assumption of the Holy Mother of God, as has become customary in the Diocese, episcopal Holy Mass would be celebrated by the Primate in the Melbourne parish of St Mary's Church. However, this has not been possible, due to the restrictive measures enforced to control the spread of the Coronavirus. The virus has also stopped the travel from Holy Resurrection to Holy Trinity to celebrate Holy Mass; a service that the Archbishop and parish priests would undertake, in turn, each Sunday. Consequently, the Archbishop, accompanied by reduced numbers of parish priests and deacons, celebrated episcopal Holy Mass in Holy Resurrection Church, streamed live on social media. He delivered his relevant sermon, emphasising the significance of the Holy Mother's assumption, beseeching her intercession

for the salvation of humanity from this menacing virus. He urged the listeners to be vaccinated as directed by the government.

The Archbishop also emphasised the somber reality of the empty pews each Sunday for months now. However, he assured the community, “we are praying on your behalf, and will continue to do so, so that during these trying times, you will be strengthened in your faith”.

On this occasion, Paros editorial congratulates all our readers who bear the Holy Mother of God’s name Mary, or its derivatives, wishing good health, patience during these pandemic affected days, as exemplified in the life of the Holy Mother. As such, on the Feast of the Assumption of St Mary, the Holy Mother of God, we recognise the name bearers - *Mary, Mariam, Maro, Marie, Marianne, Marianoush, Dirouhi, Isgouhi, Serpouhi, Markrouhi, Takouhi, Lousig, Lousadzin, Lousaper, Lousamayr, Arpenig, Yeranig, Yeranouhi, Arek, Arevig, Lousntak, Aghavni, Markarid, Nazig, Nazeni, Pergrouhi, Berjouhi, Antaram, Arousyag, Gousineh, Verkineh, Verkin, Arshalouys, Keghanoush, Keghouhi, Keghanig, Verjine, Yerchanig.*



**Monday 16** – Initiated and organised by Reverend Father Avetis Hambarzumyan, Mrs Zepur and Miss Arkeena Mouradian



(filming, editing and posting), Archbishop’s second message was posted on Facebook. The theme of the bilingual message was centred on faith. With several examples, Archbishop clarified the miraculous power of faith, particularly significant in world today, to strengthen us, and to come out of the current distressing conditions. This 20 minute message can be listened to from the church website link on the Youtube channel or the following link: <https://podcasts.apple.com/...discussions.../id1580697784>

**Sunday 22 August** – This day was nominated a National Pandemic Day of Prayer by the National Council of Churches in Australia and the NSW Ecumenical Council. Archbishop Najarian made the announcement during an interval of Holy Mass. In his bilingual explanation he invited every online viewing Christian to join in prayer, beseeching to God to have mercy on our sins, to comfort all who have lost loved ones due to the Coronavirus, to those who are suffering in hospitals or in isolation. He urged prayer be raised for the bereaved, the injured, for those who have lost their homes and livelihoods due to floods, earthquakes or fires, and the displaced refugees; for the cessation of wars, wherever people are killing each other. The Archbishop concluded “We beseech You, Lord have mercy, Lord have mercy, Lord have mercy”.



**Monday 23 August** – Archbishop Najarian presided over the periodic Diocesan Council online meeting. The meeting covered a full agenda.


**Tuesday 24 August** – The periodic Properties Committee meeting was held over which the Archbishop presided.

**Wednesday 25 August** – Following on from Part One of the online lecture series organised by the Diocesan Council with Archbishop Najarian presenting the topic, ‘The Armenian Church in Solidarity with the Armenian Statehood’, Part Two of the live Zoom session continued the subject until 900AD. Part Three of the lecture will be delivered by the Archbishop on Wednesday 29 September. The Archbishop emphasised the hardships faced by the Armenian

Apostolic Church under the reign of the Byzantine, Persian and Arab powers controlling Armenian territories and the Armenian people. He explained the negative impact of the Chalcedon creed, which was used by the Byzantine emperor as a political weapon against the Christians under his rule; giving the example of a similar, and more recent attempt by Soviet Union leaders applying pressure on His Holiness Vazken I, who with his wise and flexible diplomatic reasoning, suspended it.

Reverend Father Avetis Hambardzumyan hosted the live session and after welcoming the participants and introducing the Primate, announced these sessions will be held on the last Wednesday of each month, and will feature invited lecturers from Australia and overseas. The audience was invited to pose questions to the Archbishop on the content of the lecture and was provided thorough responses.

Paros editorial takes this opportunity to thank the Primate for commencing this beneficial program, confirming once again, that the Armenian Apostolic Church, with its bold stance and efforts, has gained honour, withstanding the challenges imposed by foreign nations, keeping its independence in ancient times and in the very present, modern history of our nation.



**Friday 27 August** – In his weekly podcast, the Archbishop’s message was based on Love. He reflected on the mutual, eternal love of the Father and the Son. He also explained Christ’s commandments to “love your neighbour as you love yourself” and “love your enemies and bless those who curse you.” Follow the link below to watch the episode on the Holy Resurrection Church Facebook page <https://www.facebook.com/watch/ArmenianApostolicChurchofHolyResurrection/> Alternatively, access the Youtube channel from the Holy Resurrection Church website. [\[www.armenianchurchsydney.org.au](http://www.armenianchurchsydney.org.au) from News & Events]

**Saturday 28 August** – Archbishop Najarian presided over the extraordinary online Diocesan Council meeting, the focus of which was the agenda of the combined community organisations committee meeting held on 30 August and to review the Deacon in Charge guidelines to enable Deacon Nishan Basmajian certain authority to enhance his service for the benefit of the New Zealand community and ecumenical circle.

**Monday 30 August** – An online meeting presided by Archbishop Najarian was convened with the participation of religious, political and benevolent organisations of the Armenian community, the Permanent Representatives of Nagorno-Karabagh in Australia and Ryde City Council, and barrister Mr Emmanuel Kerkyasharian to discuss the report he had prepared on research into the Australian-Armenian community in light of the 2020 Artsakh war. This meeting was a continuation of a series of consultations that began in the earliest days when the war in Artsakh started which Paros consistently reported on. The meeting was held in a friendly and cooperative atmosphere with constructive suggestions for community-based work.

*Thank You for Your Donation*

Alan and Natalie Baghdasarayan on the occasion of their Daughter, Chloe Baghdasarayan’s christening \$500.00

*As we say in Armenian “Anoush Avazan!”*

*Diocesan Office*

As the Diocesan office is currently being attended to remotely for certain enquiries, we are still able to process your donations electronically.

Contact us at [diocese@armenian.com.au](mailto:diocese@armenian.com.au)





## ON THE OCCASION OF HIS HOLINESS KAREKIN II SUPREME PATRIARCH & CATHOLICOS OF ALL ARMENIANS' 70<sup>TH</sup> BIRTHDAY

His Holiness Karekin II celebrated his 70<sup>th</sup> birthday on 21 August.

On this occasion His Eminence Archbishop Haigazoun Najarian, sent his congratulations to His Holiness, on behalf of the faithful of the Armenian Diocese of Australia and New Zealand, the clergy, the Diocesan Council and church bodies.

Below we present the biography of His Holiness to inform our readers about the dedicated and valuable contribution of His Holiness to our church and national life.

Paros readers will become acquainted with such national church structures, the existence of which we owe to the vision and tireless work of His Holiness.

As a reminder, His Holiness has visited the Armenian community of Australia three times, the most recent of which was in February 2019. During this visit, he presided over the official opening of the newly built Diocesan Centre, met with representatives of Armenian organisations, visited the day schools, and bestowed Archbishop Haigazoun Najarian with the honour the elevated rank and title of Archbishop.



### **Biography**

His Holiness Karekin II, the Supreme Patriarch and Catholicos of All Armenians, was born in 1951 in the village of Voskehat, near Etchmiadzin, Armenia; to Grigor and Khatun Nersissian. He was given the baptismal name of Ktrij.

He received his elementary education in his native village, and in 1965, he entered the Gevorkian Theological Seminary in the Mother See of Holy Etchmiadzin, where he graduated with distinction. Upon graduation he taught New Testament Studies and was an Assistant at the Seminary. He was ordained to the Diaconate on 25 December 1970, the Feast Day of St Stephen the proto-martyr. In 1972, he was ordained a celibate priest in the Mother See of Holy Etchmiadzin; by Archbishop Tiran Nersoyan, and given the priestly name of Karekin.

Following his ordination, Catholicos Vazken I, of Blessed Memory, arranged for Father Karekin to pursue a broad-based higher religious education at the Faculty of Divinity in Vienna, Austria, the University of Bonn, and finally the Ecclesiastical Academy and Seminary of St Sergius Monastery, of the Russian Orthodox Church.

Returning to Armenia, he was appointed to serve as the assistant to the Vicar General of the Araratian Pontifical Diocese in 1980. In April 1983, he was appointed to serve as the Vicar General of the Diocese. In October of the same year, he was ordained a Bishop and in 1992, he was elevated to the rank of Archbishop. In 1990, he was a candidate to the Armenian legislature.

During his service as Vicar to the Pontifical Diocese, he launched several initiatives, which have served as building blocks for the early days of his Pontificate.

In 1989, he founded the Vazkenian Theological Academy at Lake Sevan, a five-year course of study prior to their entrance to the Gevorkian Theological Seminary at Holy Etchmiadzin, where they would then study for one additional year.

In an effort to reach out to the youth of the newly independent nation, he acquired three of the former Communist "Youth Pioneer Palaces" in 1993, and they were converted into church-sponsored youth centres for after-school religious and artistic education and activities for young men and women. They were renamed the Armenian Church Youth Centres (Hayortats Tun)

Bishop Karekin also identified the need for a Christian Education Centre (CEC) in early 1991, to organise Christian education training, seminars, and courses in public and Sunday schools throughout Armenia.

In 1995, Archbishop Karekin founded Shoghakat Television to produce videos on archival and educational materials, to spread the message of the Christian faith within the tradition of the Armenian Church.

In 1995, Archbishop Karekin Nersissian was a candidate in the Catholicossal Elections, but he withdrew his candidacy in favour of Catholicos Karekin Sarkissian I, of blessed memory. In 1998, the late Catholicos appointed him as Catholicossal Vicar General.

He has served as a member of the Supreme Spiritual Council of the Catholicosate of All Armenians, starting in 1990 until 1999.

On October 27, 1999, as a result of a closed secret ballot election held in the Cathedral of the Mother See of Holy Etchmiadzin, Archbishop Karekin Nersissian was elected the 132nd Supreme Patriarch and Catholicos of All Armenians and was consecrated on November 4, 1999.

\* \* \*

Since his election, His Holiness has addressed the difficult tasks of restructuring and reorganising of internal church life, revitalising the theological seminaries of the Mother See of Holy Etchmiadzin, strengthening Christian education, and reconstructing churches and monasteries. Special emphasis has been placed on the preparation of a new generation of clergy to serve Armenian faithful throughout the world.

## **Building Bridges**

Shortly following his enthronement, His Holiness' first pilgrimage was made to Jerusalem to visit the Armenian Patriarchate of Jerusalem and the community, and pray at the Holy Shrines, and Churches. During his stay, he presided over the Christmas Celebrations in the Holy City.

